

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**ՏՊԱԳՐՎՈՒՄԷ «ՖԼՈՐԱ ՅԱՄԻԼԻ»**  
**ՀԻՄՆԱԳՐԱՍԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԵ ԵՎ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍՆՀԱՅԿԱԿԱՆ**  
**ՀԻՄՆԱԳՐԱՍԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԵ**



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

3

АРУТЮН АРТАШЕСОВИЧ  
МАРТИРОСЯН

БИОБИБЛИОГРАФИЯ

ВВЕДЕНИЕ, БИБЛИОГРАФИЮ И АННОТАЦИИ СОСТАВИЛ  
АРСЕН БОБОХЯН

Издательство: "Гитутюн: НАН РА  
Ереван, 2001

ARMENIAN REPUBLIC NATIONAL ACADEMY  
OF SCIENCES  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HONOURED SCIENTISTS

3

HARUTYUN MARTIROSYAN

BIOBIBLIOGRAPHY

INTRODUCTION, BIBLIOGRAPHY AND ANNOTATIONS COMPOSED BY  
ARSEN BOBOKHYAN

Publishing House "GITUTYUN" of NAS RA  
Yerevan, 2001

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ**

**3**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԿԵՆԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾԱԿԱՆԸ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝  
ԱՐՄԵՆ ԲՈՔՈՒՅՑԱՆԻ**

A II  
87186



**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն  
Երևան, 2001**

ՀՏԴ 01

ՊՄԴ 91.9: 63.4+63.4 (2Հ)

Մ 391բ

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության  
ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

*Խմբագրական հանձնախումբ.*

Ա.Քալանթարյան (նախագահ), Ս.Հարությունյան,  
Դ.Վարդունյան, Գ.Գրիգորյան, Գ.Կարախանյան

*Պատասխանատու խմբագիր* Արամ Քալանթարյան

Печатается по решению Ученого совета  
Института археологии и этнографии НАН РА

*Редакционная коллегия:*

А.Калантарян (председатель), С.Арутюнян,  
Д.Вардумян, Г.Григорян, Г.Караханян

*Ответственный редактор:* А.Калантарян

Մ 391բ *Հարություն Սարտիրոսյան:* Կենսամատենագիտություն:  
/ կազմող՝ Արսեն Բորոխյան եր.: 2001. 86 էջ.  
(Վաստակաշատ գիտնականներ)

Նշանավոր հնագետ Հարություն Սարտիրոսյանի (1921-1977) հիշատակին  
նվիրված սույն գրքույկը ՀՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
երախտավորների գիտական ժառանգությունը ներկայացնող մատենագիտական  
շարքի երրորդ հատորն է:

Գիրքը նախատեսված է հայագետների և ընթերցող լայն շրջանակների համար :

Մ  $\frac{4406000000}{703(02) - 2061}$

ՊՄԴ 91.9 :63.4+63.4(2Հ)

ISBN 5-8080-0497-7 © հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2001





En hommage à l'ami, qui venait parler  
d'archéologie, d'Orient et de poésie...<sup>1</sup>

J.-P. Boucher, L'Orient vu à travers un élégiaque latin: le témoignage de properce; De l'Indus aux Balkans, Recueil à la mémoire de J. Deshayes, Paris, (1985), 79.

1920-ական թվականներին նոր փուլ սկսվեց Հայ Հնագիտության պատմության մեջ: Հայաստանում հաստատված տեղական խաղաղությունը նպաստեց նրան, որպեսզի ստեղծվեն գիտական հաստատություններ, թանգարաններ, այլ մշակութային և կրթական կենտրոններ, որոնք պետական մոտեցում էին ցուցաբերում երկրի հնությունների նկատմամբ: Հիմնվեց Պետական համալսարանը (1919 թ.), Պատմության թանգարանը (1921 թ.), Հուշարձանների պահպանության կոմիտեն (1923 թ.), ավելի ուշ՝ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը (1943 թ.), որից հետագայում առանձնացավ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը (1959թ.): Մակայն, այնուամենայնիվ, 1920-1950-ական թթ. Հնագիտական տվյալների կուտակումը իր բնույթով տարբերային էր: Հայ և օտարազգի հնագետներն առանց դասակարգման, անբավարար փաստագրմամբ տեղեկություններ էին հավաքում Հայաստանի տարածքից, չկար ընդհանուր պատկեր հնագույն մշակույթների պարբերաբաժանման և ժամանակագրության վերաբերյալ: Զգացվում էր Հայկական Հնագիտական դպրոցի պակասը: Ահա այսպիսի պայմաններում էր, որ ասպարեզ եկավ Հարություն Մարտիրոսյանը, որն իր գիտական գործունեություն ողջ ընթացքում փորձեց լրացնել այդ բացը:

Աշխատանքային մոտ երեսնամյա խիստ արդյունավետ ժամանակաշրջանում նա ակտիվորեն մասնակցեց հանրապետությունում գիտական կյանքին՝ հաջող կերպով քարոզելով Հայաստանի մշակութային ժառանգությունը հայրենիքում և արտերկրում: Այդ ընթացքում նա կատարեց պեղումներ և հետախուզական աշխատանքներ Հայաստանի բազմաթիվ շրջաններում (Արարատյան դաշտավայր, Սևանի ավազան, Գուգարք, Շիրակ և այլն)<sup>2</sup>, Հասցրեց տպագրել 79 աշխատություն (39՝ հայերեն, 39՝

<sup>1</sup> «Ի պատիվ այն ընկերոջ, որը պատրաստվում էր մտորել հնագիտության, Արևելքի և պոեզիայի մասին...».

<sup>2</sup> Հ. Մարտիրոսյանի պեղումներից հայտնաբերված նյութերը պահվում են հիմնականում Հայաստանի պատմության պետական (Նոր Արեշ, Արգիշտիխիների, Թեյշեբախի ևն.), Սարգարապատի (Արգիշտիխիների) և Կուճայրի Շիրակի երկրագիտական թանգարաններում (Շիրակի նյութերը):

ուսանողներին, 1՝ ֆրանսերեն), որոնցից տա սը մենագրություններ են<sup>3</sup>: Այս ամենի նպատակը Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակութային և տնտեսական իրավիճակի, փոխանակային հարաբերությունների, տեղական և եկվոր տարրերի հարաբերակցության, մշակութային ժառանգականության, ի վերջո հայկական մշակույթի ակունքների և պարզաբանումն էր:

Հ.Մարտիրոսյանի հետաքրքրությունները աշխարհագրական, ժամանակագրական և թեմատիկ առումներով նույնքան բազմազան էին, որքան նրա գրելաժողովը: Այսպես, հնագետի հրապարակած աշխատանքները կարելի է ոճարանական տեսանկյունից բնութագրել որպես գիտական (մոտ 90 %), գիտա-հանրամատչելի (8 %) և գիտա-հրապարակախոսական (2 %): Թեև հեղինակը հիմնականում կենտրոնացել էր Հայկական լեռնաշխարհի (և մասնավորապես նրա արևելյան հատվածների) հնագույն մշակութային ուսումնասիրության վրա, սակայն այդ ամենը նա անում էր կովկասյան և ընդհանրապես հինարևելյան հնագիտության համատեքստում: Ժամանակագրական տեսանկյունից նա անդրադարձել է Ք.ա. IV-I հազ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածին առնչվող խնդիրներին առանձին դեպքերում, իր ուսումնասիրած ժամանակաշրջանների էությունը ավելի լավ ըմբռնելու համար, դուրս գալով վերոհիշյալի սահմաններից: Թեմատիկայի տեսանկյունից կարելի է առանձնացնել հետաքրքրությունների երեք բնագավառ.

ա. Երկաթի դար, հատկապես երկաթի լայն տարածման շրջանի տեղական մշակույթներ (որոնց առնչվող խնդիրները հանդիսացել են հեղինակի գիտական գործունեության սկզբնական շրջանի հիմնական առանցքը. դրանց է նվիրված եղել հնագետի թեկնածուական ատենախոսությունը) և համաժամանակյա ուրարտական քաղաքին, տնտեսությունը և մշակույթին վերաբերող հարցեր (հիմնականում քննարկված՝ Կարմիր Բլուրում և Արգիշտիսինիլում իր կատարած երկարամյա պեղումների կապակցությամբ):

բ. Լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտության պարբերացման և ժամանակագրության խնդիրներ (վերջիններս արտացոլում են Հ.Մարտիրոսյանի աշխատանքի հիմնական արդյունքները, որոնց էլ նվիրված է եղել նրա դոկտորական ատենախոսությունը<sup>4</sup>).

<sup>3</sup> Գործերի մի մասը լույս է տեսել Հ.Մարտիրոսյանի մահվանից հետո, մյուս մասն էլ դեռևս անտիպ է: Հնագետի արխիվը դտնվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

<sup>4</sup> Հ.Մարտիրոսյանի դոկտորական աշխատանքը բարձր գնահատականի է արժանացել Բ.Պրոտրովսկու, Ա.Իսահնի, Օ.Ջափարիձեի, Ռ.Բարնեթի և այլ նշանավոր հնագետների կողմից. այս մասին հաղորդումներ են տպվել ժամանակի

դ. Ժայռապատկերներ, նշանագրեր (Գեղամա լեռներում կատարված Հետախուզական ուսումնասիրությունների համատեքստում):

Հ.Մարտիրոսյանը իր գիտական գործունեությունը սկսեց Հայաստանի Ք.ա. X-VI դդ. տեղական նյութական մշակույթին նվիրված աշխատություններով (ցուց. 1, 2, 3, 4, 5, 6, 14, 15, 17): Ուսումնասիրելով հրատարակված նյութերը (Ռոնակ, Լավար, Բեշտաշեն ևն) և շրջանառության մեջ դնելով նորերը (Գոլովինո, Կարմիր Բլուր, Կիրովական, Լենինական, Ախթալա, Թաքիա) նա կարողացավ ճշտել Հայաստանի Վաղ երկաթի և երկաթի լայն տարածման շրջափուլերի դերը և նշանակությունը անդրկովկասյան հնագիտության բնագավառում, ներկայացրեց տնտեսության և մշակութային հարաբերությունների ընդհանուր պատկերը: Վերականգնելով արտաքին կապերի հիմնական ուղղությունները՝ ցույց տվեց, որ այս ժամանակաշրջանում ուժեղանում են առնչությունները արևելյան և հարավ-արևելյան շրջանների (Թալիշ, Քուրդիստան, Լուրիստան), թուլանում՝ արևմուտքի հետ: Իր ուսումնասիրությունների արդյունքում նա առանձնացրեց զուգահեռ գոյատևող երկու հուշարձանախմբեր՝ տեղական և ուրարտական:

Այս աշխատություններում հեղինակը հատկապես կանգ է առնում Ք.ա. VII-VI դդ. հնագիտական հուշարձանների (գլխավորապես Գոլովինոյի) բնութագրման վրա, վերհանելով այն ժամանակաշրջանը, երբ ուրարտական և տեղական մշակույթների փոխազդեցության պայմաններում, Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի մոտ վերջնականորեն անկում էին սպրում տոհմատիրական հարաբերությունները, սկսվում էր հայ ժողովրդի բուն պատմությունը: Հնագետի ամենակարևոր ձեռքբերումներից մեկն այս բնագավառում թերևս այն էր, որ նա առաջին անգամ հայտնի նյութերի հիման վրա փորձեց ճշտել ուրարտական և տեղական մշակույթների փոխհարաբերության սահմանը:

Վերոհիշյալին զուգահեռ, Հ.Մարտիրոսյանը որոշակի ավանդ ներդրեց ուրարտագիտական խնդիրների լուսաբանման բնագավառում, որի համար հիմք հանդիսացավ նրա ակտիվ մասնակցությունը Կարմիր Բլուրի (1947թ.-ից) և Արմավիրի (1962 թ.-ից) պեղումներին: Թեյշաբախիին (ցուց. 7, 12, 13, 19, 24, 32), Արգիշտիխիլիին (ցուց. 28, 33, 58, 59, 63, 69, 78, 79), նոր Արեշի ուրարտական կոլումբարիին (ցուց. 11) և այլ հուշարձաններին նվիրված իր աշխատություններում Հ.Մարտիրոսյանը անդրադառնում է ուրարտական նյութական մշակույթի և սոցիալ-

մամուլում (Հմմտ. ԵՆ, 25 մայիսի (1965), 1; ՍՀ, 10 հունիսի (1965) 1, 4; Вечерняя Москва, 3 февраля (1965) 4):

տնտեսական կյանքի բնութագրմանը, փորձում վերականգնել ուրարտական քաղաքը (ցուց. 52): Հեղինակի ուրարտագիտական աշխատությունների թագն ու պսակն է Արգիշտիխինիլիին նվիրված ուսերեն մենագրությունը (ցուց. 68), որը Հայկական Հնագիտությանը վերաբերող աշխատանքների շարքում նյութի փաստագրման, ներկայացման և քննարկման տեսանկյունից լավագույններից է: Վերոհիշյալ աշխատություններում, ինչպես նաև առանձին, Հ.Մարտիրոսյանը անդրադարձել է Ուրարտուի քաղաքական և Հասարակական պատմության խնդիրներին, փորձել վերլուծել ոչ միայն նյութական մշակույթին առնչվող այլև՝ տեքստային տվյալները (ցուց. 32, 68):

Թեյշեբախինիին վերաբերող աշխատանքներում նա Հետազոտել է Հիմնականում նախաուրարտական բնակավայրը, բնակելի թաղամասերը և վաղ Հայկական դամբարանադաշտը: Այստեղ բուն ուրարտական նյութի քննարկումը ավելի շատ ծառայում է տեղական մշակույթի բնույթը բացահայտելուն, ի տարբերություն Արգիշտիխինիլի մասին հրապարակումներին, որտեղ Հիմնական շեշտը դրվում է ուրարտական (պետական) մշակույթի վրա, և տեղական նյութը միայն հարակից է օգտագործվում: Յույց տալու համար, թե ինչպես է Հեղինակը քննարկում այդ հարաբերակցությունը, բերենք մեկ օրինակ. Թեյշեբախինի բնակելի թաղամասերի հարավ-արևմտյան մասում 1955-1956 թթ. պեղվեցին երկու բնակելի համալիրներ՝ «ազնվական ուրարտացու տունը» և նրան կից բնակելի մի այլ համալիր: Նյութական մնացորդների ուսումնասիրությունը գալիս է ցույց տալու, որ այստեղ համատեղ են հանդես գալիս տեղականը և ուրարտականը, ի տարբերություն այլ հատվածների, որտեղ դրանք առանձին են ներկայացված: Այսինքն, մենք գործ ունենք մի դեպքում մշակութային հակադրության, մյուս դեպքում՝ հակադրամիասնության հետ, ինչը շատ տեսանելի վերականգնում է Հնագետը (ցուց. 13):

Ավելի մանրամասն Հ.Մարտիրոսյանը անդրադարձել է Արգիշտիխինիլիին: Վերջինս, Հինարևելյան դասական տիպի քաղաք էր իր զուգահեռներով միջագետքյան և փոքրասիական աշխարհներում: Այն ավելի երկար կյանք է ունեցել, քան Թեյշեբախինի և հետագայում վերածվել է Հայկական պետականության կենտրոնի, ուր բացահայտվում է մշակութային ժառանգականության հանգամանքը: Ելնելով հնագիտական և սեպագիր տվյալներից Հ.Մարտիրոսյանը պարզում է Արգիշտիխինիլի սոցիալտնտեսական կյանքի մանրամասները, հատուկ ներկայացնում քաղաքի արհեստանոցները: Արգիշտիխինիլի պեղումներից ստացված տվյալների համատեքստում անդրադառնում է ուրարտական բժշկությանը, թաղման ծեսին, տեղական ցեղերի հոգևոր մշակույթի ազդեցություններին ուրարտականի վրա ևն: Ինչպես

Արգիշտիխինիլի, այնպես էլ այլ ուրարտական հուշարձանների ներկայացման ընթացքում հեղինակը քննարկում է նաև Ուրարտուի անկմանը և Անդրկովկասում սկյուլթական ցեղերի առկայությանը վերաբերող խնդիրներ:

Այսպիսով, Հ.Մարտիրոսյանի գիտական գործունեության երկաթեդարյան բնագավառում արձանագրված ամենամեծ ձեռքբերումն այն էր, որ, ի տարբերություն Ուրարտուի պատմությունը և նյութական մշակույթն ուսումնասիրող այլ մասնագետների, նա ուրարտական իրականությունը գիտեց լեռնաշխարհի տեղական, բնիկ մշակույթի տեսանկյունից փորձելով գտնել նրանց փոխազդեցությունը: Սա «Ուրարտու-Հայաստան» խնդրի բրոնզ-երկաթեդարյան հատվածի մշակման բավականին հաջող փորձ էր: Այս ուսումնասիրությունների արդյունքում, առաջին անգամ, շրջանառության մեջ դրվեց «Երկաթի լայն տարածման շրջափուլ» տերմինը, որը լայն կիրառում գտավ ոչ միայն Հայ հնագիտության մեջ:

Հ. Մարտիրոսյանի գիտական հետաքրքրությունների երկրորդ կարևոր բնագավառը վերաբերում էր Հայաստանի էնեոլիթ-երկաթեդարյան (հատկապես բրոնզ-երկաթեդարյան) հնագիտության պարբերացմանը և ժամանակագրությանը, որի միջոցով նրան, առաջին անգամ Հայ հնագիտության մեջ, հաջողվեց ստեղծել որոշակի ժամանակագրական սանդղակ: Այս իմաստով, նա վերոհիշյալ ժամանակաշրջանների անդրադարձել է ինչպես առանձին ըստ շրջափուլերի և ժամանակաշրջանների (ցուց. 29, 31, 47/էնեոլիթ/, 48, 62/Վաղ բրոնզ/, 49/Միջին բրոնզ/, 41, 50/Ուշ բրոնզ/, Վաղ երկաթի և Ուրարտուի համար տես վերը), այնպես էլ միասին (ցուց. 18, 26): Նույն համատեքստում հնագետը շոշափել է նաև Հայաստանի հնագիտական ուսումնասիրության պարբերացմանը և զարգացման հեռանկարներին առնչվող հարցեր (ցուց. 34, 67): Հեղինակի հիմնական դիտողությունները ամփոփվել են «Հայաստանը Բրոնզի և Վաղ երկաթի դարաշրջաններում» հայտնի աշխատության մեջ (ցուց. 25), որը հարցադրումների իր ընդգրկմամբ մինչ օրս մնում է չգերազանցված: Ի մի բերելով առկա հնագիտական տվյալները և ելնելով առաջավորափայլական հնագիտության չափանիշերից Հ.Մարտիրոսյանը սահմանեց պարբերացման և ժամանակագրության մի սանդղակ, համաձայն որի բրոնզ-երկաթեդարյան Հայաստանում առանձնացվում էին չորս՝ Հին, Միջին և Ուշ բրոնզի, ինչպես նաև Երկաթի հաջորդական պարբերաշրջաններ՝ իրենց ենթափուլերով: Ըստ այդմ՝ Հին բրոնզը երկփուլ պարբերաշրջան է՝ ժամանակագրորեն հաջորդական համալիրների երկու տիպերով՝ «Շենգավիթյան» ու «Գառնիի» (Ք.ա. 2500-2300 թթ.) և «Էլաույան» ու «Արագածյան» (Ք.ա. 2300-2000 թթ.):

Միջին բրոնզը եռափուլ պարբերաչրջան է և ներկայացված է երեք հաջորդական խմբերով՝ «Թաղաբենդյան» (Ք.ա. XX-XVIII դ.դ.), «Սևան-Ուղեբրիկյան» (Ք.ա. XVIII-XVII դ.դ.) և «Կիրովականյան» (Ք.ա. XVI-XV դ.դ.): Ք.ա. XIV դարը դիտվում է որպես անցումային փուլ՝ Միջինից-Ուշ բրոնզին:

Ուշ բրոնզը ևս եռափուլ շրջան է, բաղկացած, համապատասխանաբար, «Լճաշենյան» (Ք.ա. XIII-XII դ.դ.), «Որնակյան» (Ք.ա. XII դ. վերջ - XI դ.), «Թաքիայի» (Ք.ա. XI դ. վերջ - X դ.՝ Վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններ) խմբերից:

Երկաթի դարը, կամ Հայաստանի մշակույթի զարգացման հինարևելյան շրջանը, երկփուլ պարբերաչրջան է: Առանձնացվում են զուգահեռ գոյատևող երկու տարբեր հուշարձանախմբեր տեղական (երկու ժամանակագրական խմբերից բաղկացած՝ ա. վաղ-ուրարտական, որն իր հերթին ստորաբաժանվում է երկու ենթափուլերի՝ ա. Ք.ա. X դ. վերջ - IX դ. առաջին կես ու Ք.ա. IX դ. երկրորդ կես-VIII դ. վերջ; բ. երկաթի լայն տարածման՝ Ք.ա. VII-VI դ.դ.) և ուրարտական (ներկայիս Հայաստանի տարածքում թվագրվում են Ք.ա. VIII-VI դ.դ.):

Հնագիտական նյութի նման դասակարգումը ակնհայտ նորույթ էր հայ Հնագիտության համար և կանխորոշեց նրա զարգացման հեռանկարները:

Հ.Մարտիրոսյանի հետաքրքրույթյունների երրորդ ծավալուն հատվածը վերաբերում է Հայաստանի ժայռապատկերների և նշանագրերի ուսումնասիրությանը: Վերջիններս գրավել էին գիտնականների ուշադրությունը դեռևս դարասկզբին, սակայն միայն 1960-ական թթ. հիմք դրվեց նրանց պարբերական ուսումնասիրությանը: 1966-1971 թթ. ընթացքում Հ.Մարտիրոսյանի կողմից Գեղամա լեռներում փաստագրված ժայռապատկերները մեծ նորույթներ բերեցին լեռնաշխարհի բնիկների հոգևոր մշակույթի և տնտեսական կյանքի վերականգման իմաստով՝ գալով լրացնելու Սյունիքի, Արագածի լանջերի և Հարակից շրջանների վերաբերյալ մինչ այդ կուտակված նյութերը (Ա.Քալանթար, Լ.Բարսեղյան, Գ.Կարախանյան, Ս.Սարգսյան, Պ.Սաֆյան և այլք): Այս խնդիրների ուսումնասիրությանը հեղինակը նվիրել է չորս մենագրություն (ցուց. 45, 60, 75, 77) և մեկ տասնյակից ավել հոդված-հաղորդումներ (ցուց. 35, 36, 40, 42, 43, 44, 51, 56, 57, 61, 64, 71, 73): Ընդ որում, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի. աշխատություններ, որոնցում ա. նկարագրվում են ժայռապատկերները և փորձ է կատարվում դրանց թվագրումը. և բ. վերականգնվում է դրանց զուտ իմաստաբանությունը, կրոնա-պաշտամունքային, տոմարական, արվեստաբանական նշանակությունը: Մոտ 2000-3000 մ բարձրության վրա, Սպիտակասար, Պայտասար, Զիարաթ և

այլ հրաբխային գագաթներին պահպանված հարյուրավոր պատկերախմբերն ուսումնասիրվեցին ըստ իրենց կատարման տեխնիկական և ոճային առանձնահատկությունների, սյուժետային բովանդակության, դիտվեցին որպես պատմաբնագիտական ուսումնասիրության և նախնադարյան առասպելների աղբյուր: Պարզվեց, որ դրանք ընդգրկում են մի շարք հաջորդական, ծագումնաբանորեն իրար առնչվող ժամանակագրական խմբեր, որոնց սահմանները ճշտելու համար հիմք հանդիսացան այլ ավելի հստակ թվագրությունն ունեցող գուգադրվող առարկաները և նրանց պատկերագրությունը (խեցեղեն, արձանիկներ, բրոնզե գոտիներ, նետալաքներ, դամբանային սալաքարերի պատկերներ ևն): Առանձնացվեցին ժայռապատկերների հինգ ժամանակագրական խմբեր, որոնք համընկնում են համապատասխան հնագիտական շրջափուլերին՝ թվագրվելով Ք.ա. VI-IV հազ., III հազ., II հազ. 1-ին կես, II հազ. 2-րդ կես, I հազ. 1-ին կես ժամանակահատվածներով: Շեյխի Չինգիլի, Սևսարի և այլ ժայռապատկերների ուսումնասիրության հիման վրա վերականգնվեց նախնադարյան Հայաստանի յուսնա-արեգակնային տոմարը, որը պիտի գործեր թերևս Ք.ա. II հազ.-ից սկսած և ուղղված լիներ երկրագործ-անասնապահական տոների ու ծեսերի, տարվա եղանակների, ամիսների և օրերի հերթագայության կանոնակարգմանը:

Ք.ա. III-I հազ. հարյուրավոր ժայռապատկերներում և հնագիտական բազմապիսի առարկաների վրա առկա վեց տասնյակ նշանագրերի՝ ուսումնասիրությանը Հ.Մարտիրոսյանը ցույց տվեց ժայռապատկերներից դրային համակարգին անցնելու ընթացքը հենվելով հինարևելյան-հիերոգլիֆային, աղագրական, բանահյուսական, հայկական մատենագրության (մեհենագրություն) ընձեռած տվյալների վրա: Վերականգնվեցին տիեզերական և երկրային պատկերացումների նախնադարյան համակարգը, ինչպես նաև նրանց հետ կապվող նշանագրերը: Այս ամենի արդյունքում հեղինակը եկավ այն եզրակացության, որ 1. Հայաստանի նախնադարյան գաղափարաբանության, հավատալիքների ու արվեստի բարձր զարգացման հետևանքով Ք.ա. III հազ. արդեն ձևավորվել էին գրչության ամենապարզ տեսակները՝ պատկերագիրը, նշանագիրն ու գաղափարագիրը: 2. դրանք, զարգանալով հետագա դարերում, ընկնում են ուրարտական հիերոգլիֆիկայի հիմքում, որն արձատով բնիկ Հայաստանյան երևույթ էր: Արդեն ուրարտական շրջանում այն դառնում է տաճարային-մեհենական գրության միակ ձևը՝ մինչև միջագետքյան սեպագրի օգտագործումը: 3. առանց լուրջ փոփոխությունների այս գաղափարագրությունը օգտագործվում է վաղ հայկական հեթանոսական մեհյաններում՝ իբրև կրոնա-համայնական գրչության ձև, իսկ հետագայում՝

քրիստոնեութեան դարձով, չի մերժվում և հայտնվում է հայկական մատյաններում: Փաստորեն, եթե Հ.Աճառյանը որոշեց «նշանադիրք իմաստնոց»-ի առնչութիւնը հայոց դրերին, ապա Հ.Մարտիրոսյանը՝ փորձեց ճշտել նրանց ծագման ու զարգացման խնդիրը:

Այսպիսով, ժայռագրերի ուսումնասիրութեան բնագավառում, լայն ժամանակագրական դաշտի վրա, քննվում է նախնադարյան Հայաստանի հոգևոր մշակույթը, բնիկների աշխարհընկալումը, պարզ գրային համակարգը, նախնադարյան գիտութեան սաղմնավորման գործընթացը: Յույց է տրվում Հայաստանի մշակութային կյանքի անընդմեջ զարգացումը: Հ.Մարտիրոսյանը եզրակացնում է, որ արգեն Ուշ բրոնզում տիրապետող պատկերացումները հող են նախապատրաստում հետագա հեթանոսական հայկական կրոնի և արվեստի ձևավորման համար և, այս իմաստով, հայ հոգևոր մշակույթի ակունքները կարելի է փնտրել Բրոնզի դարում (ցուց. 51, էջ 276): Հնագետի այս ուսումնասիրութեան ներքին հիմնական ձեռքբերումն անշուշտ այն էր, որ նա իմաստաբանական և նշանագիտական վերլուծութեան ներքին միջոցով փորձեց վերականգնել Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան բնակչի ներաշխարհը և հոգեբանութեանը, ձգտելով հասկանալ, իր իսկ խոսքով ասած, նախնադարյան մարդու «էզոտերիկ լեզուն» (ցուց. 78, էջ 80)՝ նրան դիտելով առարկայական մակարդակից վեր, ինչը չափազանց կարևոր է զգալու համար որևէ հասարակութեան գուշտ էությունը:

Բացի հետաքրքրութիւնների վերոհիշյալ երեք բնագավառներից Հ.Մարտիրոսյանը հանդես է եկել դրանց առնչվող մի շարք հրապարակումներով, քննադատութեան ներքինով: Այսպես, որոշ գրախոսականներում (ցուց. 37, 38, 65, 76) նա փորձել է գտնել գիտութեան և սիրողականութեան սահմանը, անդրադարձել է Հ.Օրբելու (ցուց. 20, 21, 22, 65, 74) և Բ.Պիտտրովսկու (ցուց. 16, 39) գիտական վաստակին ու մեծ ծառայութեանը հայ, ինչպես նաև համաշխարհային գիտութեանը, հաղորդումներ ներկայացրել տարբեր գիտաժողովների ընթացքի և արդյունքների մասին (ցուց. 10, 46), շոշափել պատմա-հնագիտական հուշարձանների պահպանութեանը, բարեկարգմանը, վերականգնմանը և օգտագործմանը (ցուց. 9, 72), հայ հնագիտութեան զարգացման հեռանկարներին (ցուց. 67) վերաբերող խնդիրներ ևն: Մի քանի աշխատութեան ներքին Հ.Մարտիրոսյանը անդրադարձել է լեռնաաշխարհի բնիկ ցեղերի էթնիկական պատկանելութեան հարցին (ցուց. 18, 25, 26, 30) նրանց համարելով հիմնականում խուռիսուբարեացիներ, որոնք իրենց որոշակի դերն են խաղացել Հայերի կազմավորման գործընթացում և որոնցից վերջիններս ժառանգել են իրենց մարդաբանական տիպը:

Հ.Մարտիրոսյանը որոշ աշխատութիւններում, վերանալով իր հետազոտութիւնների թեմատիկ և ժամանակագրական ուղեծրից, Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրութեան պատմութեան համատեքստում և առանձին գրախոսականի ձևով, անդրադարձել է նաև Քարի դարին (հատկապես Նոր Քարի դարին) (ցուց. 42, 44, 51, 53, 67, 75) և հետուրարտական շրջանին (ցուց. 9, 66) վերաբերող խնդիրներին:

Հ.Մարտիրոսյանի գործունեութեան ամենակարևոր առանձնահատկութիւններից մեկն էլ այն էր, որ նա փորձեց իր գիտական ձեռքբերումները հանրամատչելի կերպով ներկայացնել Հայ և օտար հանրութեանը: Նրա գրչին են պատկանում երկու գիրք՝ նվիրված Հայաստանյան հնագիտութեանը՝ սկսած Քարի դարից մինչև ուրարտական ժամանակաշրջանը (ցուց. 53) և Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնիկների հոգևոր մշակույթին (ցուց. 75), ինչպես նաև Հայրենիքի և սփյուռքի տարբեր հանրամատչելի պարբերականներում և թերթերում լույս տեսած մեկ տասնյակից ավելի հոդվածներ (ցուց. 9, 23, 29, 30, 35, 38, 39, 40, 65, 66, 70, 71, 72, 73), որոնցում հեղինակը լայն հասարակութեանը մատչելի ձևով ներկայացնում է Հայաստանի տարբեր հուշարձաններում ընթացող պեղումների արդյունքները, հնագիտութեան զարգացման և հուշարձանների պահպանութեան հետ առնչվող խնդիրները և ընդհանրապես լուսարանում Հայկական լեռնաշխարհի դերը հինարևելյան մշակույթների ոլորտում: Դրանցից մի քանիստում Հ.Մարտիրոսյանը փորձում է արդիականացնել հնագիտութեան խնդիրները և, այս պարագայում, նա հանդես է գալիս ոչ միայն որպես զուտ գիտնական, այլև բացահայտում է իր հրապարակախոսական տաղանդը:

Հեղինակի գիտական և հանրամատչելի աշխատութիւններում նկատվում է օբյեկտիվ ձգտում նույն համատեքստում դիտարկելու Հայկական լեռնաշխարհի արևելյան և արևմտյան հատվածների պատմամշակութային իրավիճակները: Վերը շարադրվածը գլխավորապես վերաբերում էր Արևելյան Հայաստանին: Սակայն, իր բազմաթիվ աշխատութիւններում նա անդրադարձել է նաև Արևմտյան Հայաստանի հնագիտութեան խնդիրներին (ցուց. 17, 18, 26, 38, 62, 67, 76, բոլոր գրքերը) և հայտնի տվյալների սահմաններում շեշտել այն, որ Արևմտյան Հայաստանը՝ 1. իր միջանկյալ դիրքի և բնական (հատկապես մետաղական) պաշարների շնորհիվ եղել է հինարևելյան մշակութային աշխարհի կարևոր շրջաններից մեկը. 2. միջնորդի դեր է խաղացել Առաջավոր Ասիայի և Արևելյան Հայաստանի հնագույն մշակութային փոխառնչութիւններում, և որ, այս իմաստով, հատկապես կարևորվել է եփրատի հովիտը, որը կապող օղակ է հանդիսացել հարավային գետահովիտների և Հայկական լեռն-

աշխարհի միջև. 3. կարևորագույն դեր պետք է ունենա արդի Հայաստանի տարածքի հնագիտութեան և ընդհանրապես Հայ ժողովրդի ծագման և Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմութեան խնդիրների ճիշտ մեկնաբանման համար. 4. իր առկա սակավ նյութով, այնուամենայնիվ, ցույց է տալիս լեռնաշխարհի հնագիտական իրավիճակի միասնականութունը: Այս տեսանկյունից, Հ.Մարտիրոսյանը շեշտում է Արևմտյան Հայաստանում կատարված պեղումների անբավարար վիճակը և Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների հնագիտական նյութի համատեղ քննարկման անհրաժեշտութունը. 5. Արևմտահայաստանը բաժանվել է մի շարք մշակութային գոտիների: Այսպես, Բարձր Հայքի (իր բնորոշմամբ Հայասա Ազիի) տարածքի հուշարձանները մի կողմից պիտի որ կապվեն Կարսի, Տաշիր Զորագետի և Թուրքի, մյուս կողմից՝ կենտրոնական Անատոլիայի բուն խեթական, իսկ Մոփք-Մալաթիայի (Թոգարմա) հնավայրերը՝ Կիլիկյան Տավրոսի և Ալալախի տիպի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի հուշարձաններին: Խոսք է գնում նաև Սասնո կողմերի մշակութային օջախի մասին:

Հ.Մարտիրոսյանի գործերին բնորոշ է տրամաբանական կուռ կառուցվածքը, հարակից գիտությունների (պատմություն, ազգագրություն, առասպելաբանություն, բնական գիտություններ) տվյալների օգտագործում, անկանխակալ քննադատական մոտեցումը, և, ըստ աշխատության բնույթի, վերացական կամ կոնկրետ մտածելակերպը: Հնագետի աշխատանքային մեթոդիկական կարելի է բնորոշել որպես տիպաբանական-համեմատական:

Հ.Մարտիրոսյանի գիտական աշխատանքներում ակնհայտորեն նկատվում է ձգտում մարդկության հնագույն պատմությունը դիտարկելու նախևառաջ սոցիալական հարաբերությունների տեսադաշտից: Այս հանգամանքը հատկապես առկա է նրա ժայռապատկերներին վերաբերող ուսումնասիրություններում, որտեղ նկատվում է ակնհայտ միտում մարդուն դիտելու որպես վերհասարակական էակ և էքզիստենցիալ ուսումնասիրության առարկա:

Ըստ այդմ, Հ.Մարտիրոսյանի աշխատանքները ունեն օբյեկտի ուսումնասիրման երեք ուղղվածություն՝ ներկենցաղային (ուր վերականգնվում է մարդու առօրյան հասարակությունից դուրս), կենցաղային (երբ մարդը դիտվում է որպես հանրույթի բաղկացուցիչ մաս) և վերկենցաղային (մարդը վերացարկում է կենցաղայինը և ներկենցաղայինը տիեզերքում): Եթե փորձենք մոդելավորել այս բոլոր աշխատանքները մեկ ամբողջական համակարգի տեսքով, ապա հեղինակի վերակազմություններում մարդը հանդես է գալիս որպես այս երեքի ամբողջություն և ուսումնասիրություն հիմնական առարկա: Հ.Մարտիրոսյանին հաջողվել է իր


A II  
87186

աշխատութիւնները գրելիս վերանայ արդի մարդու ռացիոնալ աշխարհընկալումից և տեղափոխվել իր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանը, ուր գերիշխում էր առասպելամտածողութիւնը, երբ մարդը չէր տարանջատում իր ես-ը հասարակութիւնից և բնութիւնից: Այս մտտեցումը օգնել է նրան ըստ հնարավորին խուսափել հազարավոր տարիներ հեռու ընկած իրականութեան սուբյեկտիվ մեկնաբանութիւններից:

Վերոհիշյալ եռափուլ բաժանումը վերագրելի է ընդհանրապես Հ.Մարտիրոսյանի գիտական կենսագրութեան տրամաբանական զարգացմանը: Այսպես, իր գիտական գործունեութիւնը նույնպես կարելի է բաժանել երեք փուլերի. առաջին փուլում 1950-ական թթ. սկզբից մինչև 1960-ականների սկիզբը նա շոշափում էր զուտ նկարագրական խնդիրներ, որոնք ուղղված էին հիմնականում երկաթեղարյան մարդու աուօրյայի վերականգմանը: 1960-ականներից նա ավելի ու ավելի է ձգտում ստեղծել ընդհանրացնող աշխատանքներ, որոնք, ընդգրկելով պարբերացման և ժամանակագրութեան խնդիրները, ուղղված էին վերականգնելու հասարակութեան ընդհանուր պատկերը: 1960-ականների վերջից մինչև իր մահը, հնադետը, ժայռապատկերների իմաստաբանութեանը և նախնադարյան մարդու աշխարհընկալմանը նվիրված աշխատութիւններում, փորձում էր քննարկել մարդ-տիեզերք հարաբերութեան խնդիրը:

Հնադետի գիտական կենսագրութեան կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ նրա, որպես գիտնականի և մարդու զարգացող «ես»-ը ընթացել է ներփակութիւնից (գործունեութեան սկզբնական շրջանին բնորոշ զուտ գիտական և կոնկրետ աշխատութիւնները) դեպի ընդհանրացում (միջին շրջանում գիտա-հանրամատչելի և հրապարակախոսական աշխատութիւնների քանակի խիստ ավելացում) ճանապարհով, իսկ կյանքի վերջում նա հասել է դրանց լիակատար համատեղմանը:

Հ.Մարտիրոսյանի մահից (1977թ.) հետո, նրա ստեղծած համակարգի շնորհիվ, վաղ հնագիտութիւնը Հայաստանում մտավ զարգացման նոր շրջափուլ: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետութեան տարբեր շրջաններում և մասնավորապես Արարատյան դաշտում (Է.Խանգաղյան, Ռ.Թորոսյան, Գ.Արեշյան, Հ.Իսրայելյան), Տավուշում (Ս.Եսայան), Լոռիում (Ս. Դևեջյան), Երրակում (Տ.Խաչատրյան, Ռ.Բաղայան), Սևանի ավազանում (Գ.Միքայելյան, Հ.Մնացականյան, Ա.Փիլիպոսյան, Լ.Պետրոսյան, Ս.Համայակյան, Գ.Թումանյան, Վ.Ավետյան), Սյունիքում (Օ.Խնկիկյան), Արագածոտնում (Ֆ.Մուրադյան, Ն.Ենգիբարյան, Պ.Ավետիսյան, Հ.Սիմոնյան, Հ.Ավետիսյան) Հրազդան գետի ավազանում (Վ.Հովհաննիսյան, Լ.Բիյագով) իրականացված հնագիտական աշխատանքները, ինչպես նաև առանձին ուսումնասիրութեան



յունեները մետաղագործութեան (Ա. Գևորգյան, Ս. Մանդրիկյան), մարդաբանութեան (Ռ. Մկրտչյան, Ն. Քոչար) և այլ բնագավառներում, էպպես հարստացրին բրոնզ-երկաթեղարքայան Հայաստանի վերաբերյալ առկա պատկերացումները: Հանրապետութեան անկախացումից հետո 1990-ական թթ. սկզբից, նոր փուլ սկսվեց Հայ Հնագիտութեան մեջ, որի հետևանքով այն գնալով ավելի ու ավելի է ինտեգրացվում եվրո-ամերիկյան գիտութեան համակարգում: Փոխվում են ուսումնասիրութեան մեթոդները, ավելի լայնորեն են կիրառվում բնական գիտութեան (հատկապես ռադիոածխածնային) տվյալները: Նյութեր են ի հայտ եկել, որոնք համադրվելով առաջավորասիական համապատասխան գուգահեռներին, բացարձակ թվագրութեան և համեմատաբար ճշգրիտ մեկնաբանութեան հնարավորութեան են տալիս: Նոր տվյալները ինչպես հինառաջավորասիական, այնպես էլ կովկասյան և մասնավորապես Հայ Հնագիտութեան բնագավառում գալիս են հաստատելու կամ ճշտելու Հ. Մարտիրոսյանի նախկինում առաջ քաշած մի շարք տեսակետներ:

Որոշակի նորություններ են նկատվում Բրոնզ-Երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրութեան վերաբերյալ: Գիտութեան ներկա մակարդակում հաստատվում է Հ. Մարտիրոսյանի կողմից առանձնացված հնագիտական մշակութային խմբերի հավաստիութեանը, միաժամանակ զգացվում է դրանց հաջորդականութեան ու ժամանակագրական սահմանների ճշգրտման անհրաժեշտութեան: Վերջին շրջանում անդրկովկասյան հուշարձաններին վերաբերող ռադիոածխածնային տվյալների և համապատասխան նյութով բնորոշվող արևմտահայկական և առաջավորասիական հուշարձանների զուգահեռ նյութի աճը հանգեցրել է որոշակի փոփոխութեան: Մասնավորապես, մարտիրոսյանական սանդղակի ստորին ժամանակագրական սահմանը տեղաշարժվել է առնվազն 1000 տարով՝ Ք.ա. XXVI դ.-ից մոտավորապես Ք.ա. XXXV դ., որի հետևանքով Վաղ բրոնզը այսօր թվագրվում է Ք.ա. XXXV-XXIV/XXII դդ.: Համապատասխանաբար առաջ է գնացել է նաև Միջին բրոնզի ստորին սահմանը և այն թվագրվում է Ք.ա. XXIV/XXII-XVI դդ., փոփոխվում է միջինբրոնզեղարքայան մշակութային խմբերի հաջորդականութեանը (Կուրդանային-Թոնդր Վանաձորյան-Սևան-Ուզերլիկյան/Կարմիր Բերդյան/Կարմիր Վանք): Ք.ա. XVI դ. երկրորդ կես-XV դ. առաջին կեսը ընկած ժամանակաշրջանը համարվում է անցումային շրջան միջին և ուշբրոնզեղարքայան շրջանների միջև: Ուշ բրոնզը թվագրվում է Ք.ա. XV դ. երկրորդ կեսից-XII դ. առաջին կես, Վաղ երկաթը՝ Ք.ա. XII դ. երկրորդ կեսից-IX դ., Երկաթի լայն տարածման շրջանը՝ Ք.ա. VIII-VI դդ. ժամանակահատվածով: Այս համատեքստում ավելի են ճշգրտվում տեղական և ուրարտական տարրերի հարաբե-

րության խնդիրները, առանձնացվում է «բիայնական» (վանտոսայան) մշակույթ հասկացութունը՝ բնորոշելու համար ուրույն, էլիտար, պետական մշակույթը՝ առաջացած վանա լճի ավազանում Ք.ա. IX դ. վերջին քառորդին, որին համընթաց լեռնաշխարհում սկսեց՝ ձևավորվել մեկ այլ կենսաձև, որն անվանվում է «ուրարտական» մշակույթ. վերջինիս զարգացումն արդյունքն էր տեղական և վանտոսայան միջավայրերի փոխներթափանցման<sup>5</sup>:

Առաջընթաց է նկատվում ժայռապատկերների, նշանագրեր-հիերոգլիֆների ուսումնասիրության բնագավառում: Առաջարկվում են վերջիններիս դասակարգման և թվագրության նոր (բնական գիտությունների տվյալների հիման վրա) մեթոդներ: Հետազոտությունները վիկայում են Հ.Մարտիրոսյանի եզրակացությունների ճշմարտացիությունը առ այն, որ դրանք տարածված են նաև լեռնաշխարհի արևմտյան հատվածում, պատկանում են նույն մշակութային գոտուն ինչ արևելահայկական տարածքների ժայռագրերը և հիրավի վերածել են գրի պարզ տեսակի՝ որոշակի առնչություն ունենալով հայկական մեհենագրերի հետ<sup>6</sup>:

Վերջին տասնամյակներում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում (Հատկապես Փոքր և Բարձր Հայքում, Ծոփքում, Վասպուրականում) կատարվել են ծավալուն հնագիտական աշխատանքներ, որոնք արդեն հնարավորություն են տալիս մասամբ

<sup>5</sup> Պ.Ալիսիայան, Ռ.Բազալյան, Ս.Հմայակյան, Ա.Փիլիպոսյան, Հայաստանի Բրոնզ-Երկաթի դարաշրջանների պարբերական և ժամանակագրության հարցերի շուրջ (Հ.Մարտիրոսյանի սանդղակի արդի հնագիտության հիմնախնդիրների համառոտում), ՀՀՆՆ-10, (1996), 8-10; Ս.Հմայակյան, Ուրարտական պետության և մշակույթի ձևավորման խնդրի շուրջ, ՀՀՆ, 16/III, (1995), 105-106; Վերոհիշյալ հեղինակների միջինբրոնզեդարյան մշակույթների հաջորդականության մասին կարծիքը վիճարկվում է մեկ այլ տեսակետով, ըստ որի վերջիններս հանդես են գալիս միաժամանակ Ք.ա. XXIV/XXXIIIրդ դ. որպես ազգակից մշակույթների ընդհանրություն և գոյատևում են միասին մինչև Ք.ա. XVI դ. (A.E.СИМОНЯН, Новая трактовка социокультурной общности среднеи бронзы Армении, I, 7, 1, (1990), 188-208): Այս խնդիրների Պրնձի դար-Վաղ բրոնզ հատվածի հիմնական նորությունների մասին հմտ. Chronologies des pays du Caucase et de l'Euphrate aux IV-III Millenaires, ed. C.Marro, H.Hauptmann, Paris 2000.

<sup>6</sup> M.Uyanik, Petroglyphs of south-eastern Anatolia, Graz, 1974; Ա.Ա.Մարտիրոսյան, Նշանագրերի ծագման Հ.Մարտիրոսյանի վարկածը: ՀՀՆՆ-1977/8, (1979), 2; Կ.Թոխաթյան, Գեղամա լեռների մի ժայռապատկերի վերծանման փորձ, ՀՀՆՆ-10, (1996), 28; Ա.Մոմխիչյան, Հայաստանի գծային գիրը (Ք.ա. III-I հազ.): Առաջավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ, XVIII, Ե. (1999), 202-210; Ետմարտիրոսյանական շրջանում ժայռապատկերներին առնչվող խնդիրներին առանձին անդրադարձել են Ա.Ալվազյանը, Կ.Թոխաթյանը, Բ.Թումանյանը, Հ.Խարաբեյանը, Ս.Պետրոսյանը.

<sup>7</sup> Նոր դրականության ընդհանուր տեսության համար հմտ. H.Russel, Preclassical pottery of Eastern Anatolia, BAR 85, Oxford 1980; A.G.Sagona, The Caucasian region in the Early Bronze Age, BAR, 214, Oxford, 1984 (Բրոնզի և Վաղ երկաթի դար); P.E.Zimansky, Ancient Ararat. A handbook of Urartian studies, New York,

ճշգրտելու Արևելյան Հայաստանի հնագիտական մշակույթների տարածման հարավ-արևմտյան սահմանները, նոր մշակութային գոտիների առկայությունը և հիմնականում հաստատում են Հ. Մարտիրոսյանի մասամբ a priori արտահայտած տեսակետները Հայկական լեռնաշխարհում բրոնզ-հրկաթեդարյան գործընթացների միասնականության մասին:

Թեև բավական ժամանակ է անցել Հ. Մարտիրոսյանի աշխատությունների լույս ընծայումից, և բազմաթիվ տեղեկատվական ու մեթոդաբանական նորություններ են ի հայտ եկել առաջավորաստիական, կովկասյան և մասնավորապես հայ հնագիտություն ասպարեզում, սակայն այսօր էլ նրա աշխատությունները չեն կորցրել իրենց գործնական նշանակությունը:

Աշխատելով իր ժամանակաշրջանում ընդունված մեթոդներով, շնորհիվ իր խորաթափանց մտքի, բազմակողմանի իմացությունների և հավասարակշիռ տրամաբանության, հնագետին հաջողվեց ստեղծել որոշակի համակարգ, որը կարող էր հանդիսանալ հայ հնագիտական դպրոցի ձևավորման հիմքը: Թեև Հ. Մարտիրոսյանն իր գիտական գործունեության ընթացքում հետազոտեց բազմաթիվ հուշարձաններ և առանձին խնդիրներ, սակայն նրան ավելի հարագատ էր ուսումնասիրության դեղուկտիվ մեթոդը, որի շնորհիվ նա կարողացավ այդքան հաջող ընդհանրացնել առկա նյութը, երևույթներն ընկալել իրենց ամբողջականության մեջ: Այս տեսանկյունից Հ. Մարտիրոսյանը նաև պատմաբան էր և «կարողանում էր դուրս գալ հնագիտական իրի նեղ սահմաններից դեպի առինքնող ու դյուլթող պատմական վերականգնմաները», ինչպես նրա մասին արտահայտվել է հայ հնագիտության մյուս երախտավորը՝ Գ. Տիրացյանը: Նա իր առջև դրված եզակի խնդիրը պատկերացնում էր որպես ընդհանուր օրինաչափությունների բացահայտման մի օղակ, իսկ օրինաչափության սահմանումը համարում՝ գիտական ուսումնասիրության հիմնական նպատակ. «Նախնադարյան մարդու պատմությունը, - գրում է նա իր աշխատություններից մեկում, - և ընդհանրապես մարդկային հասարակության պատմությունը՝ բնության օրինաչափությունները ճանաչելու և դրանք օգտագործելու պատմությունն է. ըստ այդմ, որքան ավելի են ճանաչվում և օգտագործվում այդ օրինաչափությունները, այնքան ավելի զարգացած է հասարակությունը» (ցուց. 61, էջ 23): Նմանատիպ մոտեցմամբ նա փորձում է պարզել ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի դերը հինարևելյան քաղաքակրթությունների շարքում, այն յուրահատկությունը, որը տարբերում էր լեռնաշխարհի մշակութային իրավիճակը հին այլ

քաղաքակրթություններից և այն, թե ինչքանով էին նրա բնիկները հասել բնական օրինաչափությունների ճանաչմանը: Այս կապակցությամբ, մեկ այլ տեղում գրում է. «Հյուսիսամիջագետքյան և հայաստանյան հզոր օջախներին են պատկանում մետաղագործության, խեցեգործության, անիվի, բրուտագործական դուրբի, կուլտուրական հացարույսերի մշակման և մի ամբողջ շարք այլ կարևոր հայտնագործությունների պատիվը, հայտնագործություններ, որոնք մուծվեցին համամարդկային մշակույթի գանձարանը: Այս տարածությունների վրա բնակվող ցեղերի ստեղծած մշակույթը, ինչպես Գորդոն Չայլդն է գտնում, իր պատկառելի հնությամբ և արժանիքներով կարող է մրցել Հարավային Միջագետքի ու Նեղոսի հովտի հնագույն մշակույթների հետ» (ցուց. 47, էջ 125; հմմտ. 31, էջ 61): Եվ այս ամենը ուներ օբյեկտիվ պատճառաբանություն. շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, Հայաստանը մի տեսակ կապող օղակ էր Կովկասի, հարավ-ուստական տափաստանների, հյուսիսեթիոպիական շրջանների և Առաջավոր Արևելքի միջև, ինչը սահմանում էր նրան որպես միջանկյալ տարածաշրջանի, ուր հիրավի կարող էին տեղի ունենալ մեծ հայտնագործություններ (ցուց. 18, էջ 108):

Հ.Մարտիրոսյանը պատմական օրինաչափություններ է նկատում նաև հնագույն Հայաստանի մշակութային իրավիճակի ժառանգականության մեջ. լեռնաշխարհի նախաբնիկների արժեքային համակարգի հարատևման պատճառը, ըստ նրա, «պետք է փնտրել նախնադարյան բնապաշտական գաղափարախոսության առողջ ու կենսունակ երակների, Հայաստանի մշակութային կյանքի անընդմեջ ու վերընթաց ավանդական զարգացման» (ցուց. 60, էջ 69), «բնափիլիսոփայական և գեղարվեստական ներամփոփման ուժի ու հին երկրագործական գաղափարախոսության պահպանողականության» (ցուց. 78, էջ 84) մեջ: Փորձելով ավելի խորը մեկնաբանել այդ գաղափարախոսության էությունը Հ.Մարտիրոսյանը նշում էր, որ Հայաստանի նախաբնիկների պատկերացումները «դուրս էին գալիս զուտ կրոնա-պաշտամունքային շրջանակներից և ներկայացնում էին սուր դիտարկումների վրա հիմնված գրական գիտելիքների պարզունակ դիալեկտիկական մի համակարգ, որի բուն էությունը խարսխված էր երկնային լուսատուների շարժման, ուրեմն և ժամանակի մշտնջենական կատեգորիաների վրա» (ցուց. 61, էջ 25): Այսպիսով, Հ.Մարտիրոսյանը շոշափում է առասպելամտածողության մեջ ուսցիտնալ գիտելիքի առկայության և ժամանակի ընկալման հետ առնչվող խնդիրներ, որոնք նրա հարցադրումներին տալիս են հիրավի միջագետքյան մակարդակ, քանզի հնագիտական տվյալների հիման վրա վերոհիշյալ հարցերը գիտական շրջանակներում մինչ օրս մնում են գրեթե չուսումնասիրված:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ Հնագիտության բաժինը ղեկավարելու տարիներին Հ.Մարտիրոսյանի բարեմասնություններն ի հայտ եկան նաև նրա կազմակերպչական գործունեության, նոր կադրերի պատրաստման բնագավառում, և պատահական չէ, որ գործընկերները ճանաչում էին Հ.Մարտիրոսյանին որպես բարյացակամ և պատրաստակամ անձնավորություն: Նրա անձի մեջ համասեղված էր ոչ միայն լուրջ գիտնականը այլև՝ ազնիվ անհատը, ինչը նրա դաստիարակության (նա ծնվել էր մտավորականի ընտանիքում, հայրը՝ Արտաշես Տեր-Մարտիրոսյանը, բանաստեղծ էր), կրթվածության և ինքնուրույն ձևավորված աշխարհայացքի արդյունքն էր:

Վերջում անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ ևս շեշտել Հ.Մարտիրոսյանի ունեցած կարևորագույն դերը հայ Հնագիտության զարգացման գործում: Թեև նա ապրեց ընդամենը 56 տարի և, ըստ էության, կնքեց իր մահկանացուն ուժերի ծաղկման շրջանում, սակայն հասցրեց մեծ արժեքներ ստեղծել, որոնք բարձր դնահատականի են արժանացել պետական և ակադեմիական շրջանակներում: Այսօր էլ ըստ արժանվույն գնահատվում է մեծ հնագետի վաստակը, որի ապացույցն է 1992թ. Հայաստանի պատմության պետական թանգարանում հնագետի 70-ամյակի կապակցությամբ բացված ցուցահանդեսը, 1996 և 2001թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում նրա հիշատակին տեղի ունեցած գիտաժողովները:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

1921 թ. մայիսի 1	Ծնվել է Լենինականում
1938 - 1941 և 1946 - 1948 թթ.	Սովորել է ԵՊՀ Պատմ- ու-թյան ֆակուլտետում
1941- 1945 թթ.	Զորակոչվել է Խորհրդային բանակ, կռվել Հյուս. Կով- կասում և Ուկրաինայում՝ որպես մարտկոցի հրամա- նատար
1944 թ.	Անդամագրվել է ԽՍԿԿ չար.քերք
1948- 1951 թթ.	Սովորել է Լենինգրադի ա- սպիրանտոլոգում
1947- 1958 թ.	Պեղումներ Թեյչերախնիում
1950 թ.	Պեղումներ Գոլովինոյում
1951 թ.	Շնորհվել է պատմական գիտությունների թեկնա- ծուի գիտական աստիճան
1952 թ.	Պեղումներ Գառնիում («Թաղչա բլուր») )
1955 թ.	Կիրովականի դամբարա- նադաշտի ուսումնասի- րումը

- 1956 թ. Պեղումներ Գեղարտում
- 1957 թ. Նոր Արեշի ուրարտական  
կոլումբարիի ուսումնասի-  
րումը
- 1959- 1977 թթ. ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության  
և ազգադրության ինստի-  
տուտի Վաղ Հնագիտու-  
թյան բաժնի վարիչ
- 1962-1977 թթ. Պեղումներ Նոր Արմավիրում
- 1965 թ. Շնորհվել է պատմական  
գիտությունների դոկտորի  
գիտական աստիճան
- 1966- 1971 թթ. Ժայռապատկերների  
գրանցում Գեղամա  
լեռներում
- 1977 թ. Հունիսի 28 Վախճանվել է Երևանում

## **КРАТКИЙ ОЧЕРК НАУЧНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**

С 1920-ых гг. началась новая эпоха в истории армянской археологии. Продолжительный мир способствовал образованию в Армении музеев и научных учреждений, которые могли бы проявить государственный подход к древностям страны. Однако, в 1920-50-ых гг. сбор археологической информации в Армении по своей сущности был спонтанным. Отсутствовала общая картина периодизации и хронологии археологических памятников. В этих условиях вступил на научную арену Арутюн Мартиросян, который в течении всей своей жизни старался восполнить этот пробел.

За свою тридцатилетнюю бурную деятельность археолог активно участвовал в научной жизни страны. Он осуществил археологические работы в различных областях Армении (Арагатская долина, бассейн озера Севан, Ширак и т. д.), опубликовал ок. 80 научных работ, десять из которых являются монографиями. Целью проделанной им работы было исследование культурно-хозяйственной жизни древнейшей Армении.

Географические, хронологические и тематические интересы А.Мартиросяна разнообразны. Хотя в основном археолог концентрировался на вопросах исследования археологии Армянского нагорья, однако он выполнял это на фоне общей кавказской и переднеазиатской реальности. С хронологической точки зрения он затрагивал вопросы, касающиеся IV-I тыс. до н.э. В области тематики можно выделить, в частности, вопросы археологии Железного века и Урарту, периодизации и хронологии памятников эпохи Бронзы и Раннего железа Армении, духовной куль-

туры гревней Армении в контексте изучения наскальных изображений.

А.Мартirosян начал свою научную деятельность с работ, посвященных материальной культуре Закавказья X-VI и особенно VII-VI вв до.н.э. (библ. 1, 2, 3, 4, 5, 6, 14, 15, 17). Исследуя как старые (Ворнак, Лалвар, Бешташен и др.), так и новые (Головино, Кармир Блур, Кировакан, Ленинанкан, Ахтала, Такиа) материалы, он охарактеризовал культурно-хозяйственное положение, направления основных внешних связей Закавказья в эпоху, когда автохтонные племена вступили в последний этап разложения первобытных отношений, начиналась исконная история армянского народа. В процессе исследования он выявил две группы памятников - автохтонных и урартских, поставил вопрос о взаимовлиянии этих культур.

А.Мартirosян, на основе материалов из раскопок Кармир-Блура (библ. 7, 12, 13, 19, 24, 32), Армавира (библ. 28, 33, 58, 59, 63, 68, 69, 78, 79), Нор Ареша (библ. 11) и др. памятников, внес особый вклад также и в освещение урартологических проблем. Им были затронуты вопросы, касающиеся урартской материальной и духовной культуры, социальной жизни города, политической истории.

В работах о Тейшебаини были исследованы доурартское поселение, жилые кварталы и раннеармянский могильник. Здесь освещение урартского материала служит для выяснения сущности автохтонной культуры, в отличие от Аргиштихинили, где основной акцент ставился на урартскую государственную культуру. Большое внимание уделяется исследованию социальной жизни города. На основании полученных данных А.Мартirosян затрагивает вопросы урартской медицины, погребального обряда и т.д. Освещаются проблемы, касающиеся археологической интерпретации вопросов последнего периода истории Урарту.

Таким образом, в отличие от других авторов, А.Мартirosян впервые, рассматривает урартскую культуру с

точки зрения локальной, автохтонной, пытаюсь найти границу взаимовлияния этих двух реальностей.

Вторая область научных интересов А.Мартirosяна относилась к проблеме периодизации и хронологии эпох (Энеолита) Бронзы и Раннего железа Армении, посредством которого впервые в армянской археологии ему удалось создать особую шкалу секвенции археологических групп и культур. Он рассмотрел эти вопросы как с точки зрения отдельных периодов и эпох (библ. 29, 31 /Энеолит/, 48, 62 /Ранняя бронза/, 49 /Средняя бронза/, 41, 50 /Поздняя бронза/, для Раннего железа и Урарту см. выше), так и вместе (библ. 18, 26). Основные идеи автора изложены в его книге "Армения в эпоху бронзы и раннего железа" (библ. 25), которая по своей сущности и охвату остается непревзойденной в армянской археологии. На основе имеющихся данных, исходя из критерий переднеазиатской археологии, А.Мартirosян создал шкалу периодизации и хронологии памятников вышеуказанных периодов, согласно которой в Армении эпохи Бронзы и Раннего железа выделялись четыре последующих периода Древней, Средней, Поздней бронзы и Раннего железа. Ранняя бронза представляет из себя двухэтапный период состоящий из последовательных комплексов - Шенгавит / Гарни (2500-2300гг. до.н.э.) и Элар / Арагац (2300-2000гг. до.н.э.). Средняя Бронза - трехэтапный период в которую входят Тазакенгская (XX-XVIII вв. до.н.э.), Севан-Узерликская (XVIII-XVII вв. до.н.э.) и Кироваканская (XVI-XV вв. до.н.э.) группы. XIV в. до.н.э. рассматривается как переходный этап от Средней к Поздней бронзе. Поздняя бронза также является трехэтапным периодом, состоящим соответственно из Лчашенской (XIII-XII вв. до.н.э.), Ворнакской (конец XII-XI вв. до. н. э.), Такийской (конец XI-X вв. до. н. э.) групп. Железный век, или древневосточный этап развития культуры Армении, является двухэтапным периодом : выделяются параллельно существующие две группы памятников - автохтонных (конец X-VI вв. до.н.э.) и урартских (VIII-VI вв. до.н.э.).

Такая классификация материала была, несомненно, новизной в армянской археологии и предопределила перспективы его развития.

А.Мартirosян уделил большое внимание также изучению наскальных изображений и иероглифов первобытной Армении. Наскальные изображения, зафиксированные им в 1966-1971 гг. в Гегамских горах (вулканические вершины Спитакасар, Пайтасар, Зиарат и т.г.) принесли много нового для реконструкции духовной культуры региона. Изучению этих вопросов автор посвятил четыре монографии (биб. 45, 60, 75, 77) и около десятка статей (библ. 35, 36, 40, 42, 43, 44, 51, 56, 57, 61, 71, 73). В этих работах А.Мартirosян старается описать, датировать, классифицировать с технической, стилистической, сюжетной точек зрения более ста групп наскальных изображений, выявить семантику, религиозное значение, рассматривая их как исторический источник. Исследования показали, что они состоят из нескольких последовательных, генетически взаимосвязанных хронологических групп. Базисом для выяснения границ между этими группами послужили другие, имеющие более четкую датировку, артефакты (керамика, статуэтки, бронзовые пояса, наконечники стрел и т.г.) и их иконография. Были выделены пять хронологических групп наскальных изображений соответственно датирующихся VI-IV тыс. до н.э., III тыс. до н.э., первой половиной II тыс. до н.э., второй половиной II тыс. до н.э., первой половиной I тыс. до н.э. На основе исследования таких групп наскальных изображений, как Шейхи Чингил, Севсар и т. г., был реконструирован лунно-солнечный календарь первобытной Армении (II тыс. до н.э.), который служил для канонизации ритуально-праздничных и сезонных циклов гревних общин.

Исследованием ок. шестидесяти иероглифов, имеющих на наскальных изображениях и разных артефактах, при использовании гревневосточных, этнографических и манускриптных данных, А.Мартirosян показал

процесс перехода от наскальных изображений к примитивной письменной системе. В этом контексте была восстановлена первобытная структура космических и земных представлений гревних обитателей Армянского нагорья. В результате этих исследований автор приходит к выводу, что уже в III тыс. до н.э., на основе высокого развития первобытной идеологии, сформировались самые примитивные типы идеографической письменности, которые позднее стали базисом для урартской иероглифики. Без серьезных изменений эта система использовалась в гревнеармянских храмах, в качестве религиозного письма, а после принятия христианства не была отвергнута и продолжала восприниматься как иероглифическое письмо (*ճեհնիւնիք*). Если Г.Ачарян показал связь этих письмен с армянским, то А.Мартirosян поставил вопрос об их происхождении и первоначальном развитии.

В своих исследованиях по наскальным изображениям А.Мартirosян выявил многие другие аспекты духовной культуры первобытной Армении. Он пришел к выводу, что мировоззрение аборигенов Армянского нагорья уже в Позднем бронзовом веке стало основой для армянской языческой веры и искусства, и с этой точки зрения, истоки армянской духовной культуры нужно искать именно в бронзовом веке (библ. 51, с. 276). Главным достижением автора в этой сфере было то, что посредством семиотических исследований, он попытался восстановить внутренний мир, психологию и "эзотерический язык" (библ. 78, с. 80) человека бронзового и железного веков.

Кроме вышеупомянутых трех областей интересов, А.Мартirosян выступил с рядом других публикаций. Так, в нескольких рецензиях (библ. 37, 38, 65, 76) он попытался найти границу между дилетантизмом и профессионализмом, ознакомил читателя с научным опытом и большим вкладом в историческую науку акад. И.Орбели (библ. 20, 21, 22, 65, 74) и Б.Пиотровского (библ. 16, 39), представил

информацию о процессе и результатах нескольких научных конференций (библ. 10, 46).

Одной из главных особенностей научной деятельности А.Мартиросяна было представление гостижений армянской археологии широкому кругу читателей. Его перу принадлежат две популярные книги (библ. 53, 75) и более десяти статей, напечатанных в отечественных и зарубежных журналах и газетах (библ. 9, 23, 29, 30, 35, 70, 71, 72, 73), посвященных материальной и духовной культуре, этническому составу и значению Армянского нагорья в системе древневосточных культур.

И в сугубо научных, и в популярных работах А.Мартиросян рассматривает культурную ситуацию восточных и западных областей Армянского нагорья в общем контексте, подчеркивая общность развития исторических процессов в двух регионах (библ. 17, 18, 26, 38, 62, 67, 76, все книги) и указывая на то, что Западная Армения, благодаря своему транзитному положению и полезным ископаемым, была одной из ключевых областей Передней Азии и играла роль посредника между Передней Азией и Кавказом. Западные области Армянского нагорья должны играть важную роль в понимании вопросов археологии Восточной Армении и реконструкции древнейшей истории нагорья вообще. А.Мартиросян пришел к выводу, что территория Западной Армении в Бронзовом веке разделялась на несколько культурных зон: так, памятники Бардзр Хайка (по его терминологии - Хайаса Аззи) входили в состав той же культурной зоны, что и Карс, Ташир Дзорагет, Триалети, а памятники Тцопк-Малати (Тогарма) были родственны с памятниками Киликийского Тавра и Алалаха, а также Восточной Армении. Речь идет и о Сасунском культурном очаге.

Работам А.Мартиросяна присуща логическая структура. Они в основном состоят из пяти частей: 1. предисловие (общее представление рассматриваемой работы, история изучения проблемы); 2. дескрипция, типология и классификация материала; 3. горизонтальный (прост-

ранственный) и вертикальный (хронологический) анализ материала по данным наличных параллелей; 4. датировка памятника и дефиниция культурной принадлежности; 5. заключение (выявление роли и значения исследуемого материала, закономерности исторического развития). Рисунки, как правило, используются в тексте, таблицы расположены в конце работы: они имеют соответствующие объяснительные списки. Ссылки даются по тексту. Работам характерно использование смежных дисциплин (история, этнография, мифология, семантика, естественные науки) и критический подход. Методику А.Мартиросяна можно охарактеризовать как типологическо-сравнительную.

Работы А.Мартиросяна имеют три направления изучения объекта. В первом из них реконструируется семейный быт человека вне социума, во втором он рассматривается как неотъемлемая часть социума, и в третьем - космоса. В оценках автора человек в роли главного объекта исследования является единством этих трех миров. А.Мартиросяну удалось выйти из рамок рационального мышления современного человека и перенестись в исследуемую эпоху мифологического мышления, когда человек не отделял свое Я от социума и космоса. Такой подход помог автору избежать субъективизма при реконструкции реалий столь отдаленных эпох.

Вообще говоря, вышеупомянутое трехэтапное деление отражено в логическом развитии научной биографии А.Мартиросяна. Так, его деятельность также можно разделить на три этапа. На первом этапе (1950-ые-начало 1960-ых гг.) он обращался только к дескриптивным вопросам, касающимся реконструкции быта человека Раннего железа. В 1960-ых гг. автор создает обобщающие работы, которые, вмещая проблемы хронологии и периодизации, были направлены на реконструкцию общей картины общества. В конце 1960-ых и в 1970-ых гг. археолог, ввиду своих работ по духовной культуре и мировоззрению первобытного человека, пытался рассмат-

ривать проблему отношения человек-космос. Трудно сказать, было ли соответствие между научной биографией автора и моделью реконструируемого им первобытного человека осознанным или случайным, однако ясно, что в данном случае мы имеем дело с архетипными ценностями, которые должны были особенно проявиться у такого человека, который, живя настоящим, был так близок к прошлому.

После смерти А.Мартirosяна (1977), благодаря его работам, ранняя археология в Армении продолжала свое развитие. Археологические работы, проведенные в течение последних двух десятилетий в разных регионах республики, существенно обогатили наши представления об обществе Армении эпохи Бронзы и Раннего железа. В 1990-ых гг. в истории армянской археологии начался новый этап, постепенно изменились методы исследования. Выявились материалы, которые сопоставляясь с переднеазиатскими параллелями, расширили возможность абсолютных датировок. Новые данные как в переднеазиатской, так и в кавказской археологии дополняют и подтверждают многие идеи и теории А.Мартirosяна.

Определенная новизна намечается в исследовании вопросов периодизации и хронологии. По сегодняшним данным, подтверждается достоверность культурных групп, выделенных А.Мартirosяном, но ощущается необходимость корректировки их последовательности и хронологии. Исследования последних лет переводят нижнюю хронологическую границу культур Бронзового века с XXVI в. в XXXV в. до н.э., в результате чего Ранняя бронза сегодня датируется XXXV-XXIV/XXII вв. до н.э. Соответственно меняется датировка и секвенция средне-бронзовых культур. Вторая половина XVI-первая половина XV вв. до н.э. воспринимается как переходный этап от Среднего к Позднему бронзовому веку. Поздняя бронза датируется второй половиной XV-первой половиной XII вв. до н.э., Раннее железо - второй половиной XII-IX вв. до н.э., эпоха Широкого освоения железа VIII-VI вв.

до н.э. В этом контексте развиваются идеи А.Мартirosяна о взаимоотношениях автохтонных и урартских культур. "Биайнской" (вантоспской) называется элитарно-государственная культура возникшая в бассейне оз. Ван в последней четверти IX в. до н.э., параллельно которой на территории Армянского нагорья начала формироваться другая культура, именуемая "урартской", развитие которой было результатом взаимовлияния локальных и биайнских культур.

Намечается прогресс в области исследования наскальных изображений и иероглифов. Новые работы свидетельствуют о достоверности идей А.Мартirosяна о том, что они распространились также и на западные области Нагорья, относятся к той же культурной зоне, что и восточноармянские и переросли в примитивные типы письма, имея определенные связи с армянскими средневековыми иероглифами.

В последние годы в Западной Армении, особенно в Малой и Высокой Армении, Тцопке и Васпуракане ведутся обширные археологические работы, которые дают возможность представить юго-западные границы распространения закавказских археологических культур и подтверждают мнение А.Мартirosяна об общности культурно-исторических процессов на Армянском нагорье в Бронзовом и Железном веках.

Хотя уже прошло много времени после выхода в свет работ А.Мартirosяна, однако, несмотря на информативные и методологические нововведения, его работы до сих пор не теряют своего значения.

Благодаря своей проницательности и многосторонности, археологу удалось создать определенную систему, которая легла в основу развития армянской ранней археологии. Хотя в течение своей деятельности А.Мартirosян коснулся многих отдельных научных, однако ему был присущ дедуктивный подход к исследованию, благодаря чему удалось обобщить наличный археологический материал и понять разные явления в своей совокуп-

ности. Поставленный вопрос он представлял как одно звено, направленное на понимание общих исторических закономерностей, выявление которых считалась главной целью научного исследования. "История первобытного человека, - пишет он в одной из своих работ, - и вообще человеческого общества, является историей познания природных закономерностей и их использования" (библ. 62, с. 23). С этой точки зрения он пытается осмыслить роль культур Армянского нагорья в ряду гревневосточных цивилизаций и то, насколько его гревние обитатели были близки к познанию этих закономерностей. Армянское нагорье, будучи контактной зоной между Кавказом, южнорусскими степями и Передней Азией, было ареной многосторонних контактов, но имело особенности своего развития. А.Мартirosян находил исторические закономерности также в наследственности культурной ситуации гревней Армении, основой чего была, по его мнению, консервативность идеологии носителей этих культур.

В годы руководства отделом Ранней археологии Института Археологии и Этнографии АН Арм.ССР, А.Мартirosян проявил себя также в роли опытного организатора науки и в подготовке научных кадров.

А.Мартirosян прожил недолгую, но плодотворную жизнь. Его научные и гражданские заслуги были удостоены высокой оценки как в государственных, так и в академических кругах, о чем свидетельствуют многие награды, а также научные сессии и отдельные публикации, посвященные памяти археолога.

## **ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АРУТЮНА АРТАШЕСОВИЧА МАРТИРОСЯНА**

**1921г., 1 мая**

Родился в городе Лени-  
накане (Кумайри)

**1938-1941 и 1946- 1948гг.**

Учился на Историчес-  
ком факультете ЕГУ

**1941-1945гг.**

Был призван в Со-  
ветскую армию.  
Сражался на Север-  
ном Кавказе и на Ук-  
раине. Был команди-  
ром батареи

**1944 г.**

Вступил в ряды  
КПСС

**1948-1951 гг.**

Учился в аспиранту-  
ре г. Ленинграда

**1947-1958 гг.**

Раскопки в Тейше-  
баини

**1950 г.**

Раскопки в Головино

**1951 г.**

Присуждена ученая  
степень кандидата  
исторических наук

- 1952 г.** Раскопки в Гарни  
(Тагча Блур)
- 1955 г.** Исследование Кироваканского некрополя
- 1956 г.** Раскопки в Гехароте
- 1957 г.** Исследование урартского колумбария  
Нор Ареша
- 1959-1977 гг.** Заведующий отделом Ранней археологии Института Археологии и этнографии АН Арм. ССР
- 1962-1977 гг.** Раскопки в Нор Армавире
- 1965 г.** Присуждена ученая степень доктора исторических наук
- 1966-1971 гг.** Исследование наскальных изображений в Гегамских горах
- 1977 г., 28 июля** Скончался в Ереване

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Հ.Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ЛИТЕРАТУРА О ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ  
А.А.МАРТИРОСЯНА**

**Գ.Կարախանյան, Գրախոսություն.** «Հ.Մարտիրոսյան, Գոլոպի-նոյի պեղումները, Երևան 1954», ՏՀԳ, 1, (1956), 105-108.

**Գ.Կարահանյան,** Рецензия на кн. А.Мартirosян, Раскопки в Головино, Ереван 1954, ВОН, 1, (1956), 105-108.

**Գ.Տիրացյան, Ե.Հարությունյան, Գիրքը պատմում է Հաղարամ-յակների մասին, ՍՀ, 18 նոյեմբերի (1964), 1 (տե՛ս ցուց. 25).**

**Գ.Տիրացյան, Ն.Արուտյան,** Книга повествует о тысяче-летиях, САрм., 18 ноября (1964), 1. (см. библи. 25).

**Կ.Խ.Կուշնարեա,** Рецензия на кн. Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван 1964, ИФЖ, 4 (1965), 272-277.

**Արգիշտիխինիլի պեղումները, ՍՀ, 15 հունիսի (1965), 1.**

**Раскопки Аргиштихинили, САрм., 15 июля (1965), 1.**

**Ի.Դավթյան,** Аргиштихинили 1965 г. Коммунист, 11 июля (1965), 1.

**Экспедиции ученых, Коммунист, 11 июня (1966), 1 (Об Армавире).**

**Գ.Գալուստյան, Նախնադարյան մարդու ստեղծագործությունը, ԵԵ, 16 սեպտեմբերի (1969), 4 (Գեղամա լեռների ժայռապատկեր-ների մասին).**

**Г.Галустян**, Творение первобытного человека, ВЕ, 16 сентября (1969), 4 (О наскальных изображениях Гегамских гор).

**Լ.Քարսեղյան**, Գրախոսութիւն. «Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971», ՍՀ, 12 հունվարի (1972), 4.

**А.Барсебян**, Рецензия на кн. Наскальные изображения Гегамских гор, Ереван, 1971, САРМ., 12 января (1972), 4.

**А.А.Формозов**, Новые книги о наскальных изображениях в СССР (обзор публикаций 1968-1972гг.), СА, 3, (1973), 257-265 (см. библи. 45).

**Արտ. Մարտիրոսյան**, Գիրք նշանագրերի մասին, ՍՀ, 3 հունվարի (1974), 4. (տես, ցուց. 61).

**Արտ.Мартirosян**, Книга об иероглифах, САРМ., 3 января (1974), 4 (см. библи. 61).

**К.Степанян**, Рецензия на кн. А.А.Мартirosян, Аргиштихинули, Ереван, 1974, Литературная Армения, 1 (1975), 101-102.

**Г.А.Тирациян**, Рецензия на кн. А.А.Мартirosян, Аргиштихинули, Ереван, 1974, ВОИ, 3, (1976), 111-114.

**В.М.Массон**, Рецензия на кн. А.А.Мартirosян, Аргиштихинули, АПА 8, вып. I, Ереван 1974, ВДИ, 2 (1976), 157-162.

**Է.Վ.Խանզադյան**, «Հարութիւն Արտաշեսի Մարտիրոսյան». Մահախոսական, ԼՀԳ, 8 (1977), 111- 112.

**Э.В.Ханзадян**, Арутюн Арташесович Мартirosян.: Некролог, ВОИ, 8 (1977), 111- 112.

**ՀՍՍՀ ԳԱ Նախագահութիւն, Պատմութեան և տնտեսագիտութեան բաժանմունք, Հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ.** «Հ.Ա.Մարտիրոսյան». Մահախոսական, ՍՀ, 30 հունվարի (1977), 4.

*Президиум АН Арм. ССР, Отдел Истории и экономики, Институт Археологии и этнографии, "А.А.Мартirosян". Некролог, САрм, 30 июля (1977), 4.*

*Հռչակաւոր հայադէտ եւ հնադէտ Յարութիւն Մարտիրոսեանի ծահուան առթիւ, Արարատ (Բեյրութ), 29 հոկտեմբերի (1977), 3.*

*По поводу кончины выдающегося арменоведа и археолога Арутюна Мартиросяна, Арарат (Бейрут), 29 октября (1977), 3.*

*Арутюн Арташесович Мартиросян. 1921-1977. Некролог, СА, 2 (1978), с. 331.*

*Ա.Ա.Մարտիրոսյան, Նշանադրերի ծագման Հ.Մարտիրոսյանի վարկածը: ՀՀՆՆ-1977/8, (1979), 2.*

*А.А.Мартиросян, Гипотеза А.Мартиросяна о происхождении иероглифов: СПАА 1977/8, (1979), 2.*

*Ա.Ա.Եսայան, Կարմիր Բլուր, Երևան, 1982.*

*С.А.Есаян, Кармир Блур, Ереван, 1982.*

*Հարություն Արտաշեսի Մարտիրոսյան, Ինստիտուտի կողմից, ՀՀՆՆ-10 (1996), 3.*

*Арутюн Арташесович Мартиросян, От Института, СПАА-10 (1996), 3.*

*Գ.Տիրացյան, Ելույթ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության պետական թանգարանի միացյալ նիստում, նվիրված Հ.Մարտիրոսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ բացված ցուցադրությանը 1992թ., ՀՀՆՆ-10 (1996), 4.*

*Г.Тирацян, Речь, прочитанная на совместной сессии Института Археологии и этнографии и Государственного исторического музея Армении, посвященной экспозиции, открытой по поводу 70-летия А.Мартиросяна 1992 г., СПАА-10 (1996), 4.*

*Պ.Ավետիսյան, Ռ.Բաղդյան, Ս.Հմայակյան, Ա.Փիլիպոսյան, Հայաստանի Բրոնզ-Երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ (Հ.Մարտիրոսյանի սանդղակն արդի հնագիտության հիմնախնդիրների համատեքստում), ՀՀՆՆ-10, (1996), 8-10.*

**П.Аветисян, Р.Бадалян, С.Амаякян, А.Пилипосян, К**  
**вопросу о периодизации и хронологии эпох Бронзы—Же-**  
**леза Армении (Шкала А.Мартirosяна в контексте основ-**  
**ных вопросов современной археологии), СПАА-10, (1996),**  
**8-10.**

ХРОНОЛОГИЧЕСКИЙ СПИСОК ТРУДОВ  
С АННОТАЦИЯМИ

1951

**1. Культура Южного Закавказья в VII- VI вв до. н. э. по археологическим данным. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван 1951, 28 с.**

Սեղմագիրը, Հ.Մարտիրոսյանի Հարավային Կովկասի Ք.ա. VII-VI դդ. հնագիտական իրավիճակին նվիրված թեկնածուական ատենախոսության համառոտ տարբերակն է՝ բաղկացած ներածությունից և չորս գլուխներից: Առաջին գլխում («Անդրկովկասում Երկաթի դարի հնագիտական հուշարձանների ուսումնասիրության համառոտ ակնարկ») հեղինակն անդրադառնում է անդրկովկասյան հնագիտության ութսունամյա ուսումնասիրության պատմությանը: Երկրորդ գլխում («Գոլովինո ավանի մոտ գտնվող երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի հնագիտական հուշարձանները») վերլուծում է Գոլովինոյի հուշարձանի նյութական մշակույթը: Հաջորդ գլխում («Համաժամանակյա հուշարձաններ») քննում է վերջինիս ժամանակակից հուշարձանները (Վոռնակ, Լալվար, Բեշտաշեն, Կարս ևն): Հատկապես կանգ է առնում Թեյշեբախինի ոչ ուրարտական նյութերի վրա: Վերջին գլխում («Խրտանոցի կիրճի դամբարանադաշտի ինվենտարը և Համաժամանակյա հուշարձանները») ներկայացվում է Խրտանոցի դամբարանադաշտի նյութական մշակույթը: Այս բոլոր վերլուծություններից հետո հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Ք.ա. VII-VI դդ. մեծ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանի և ընդհանրապես ողջ Անդրկովկասի տարածքում. տնտեսական վերելքը, շփումները ուրարտացիների հետ նոր ազդակներ են հաղորդում անդրկովկասյան բնակչությանը: Տարածաշրջանի բնիկները կանգնում են դասակարգային հասարակության ստեղծման շեմին, առաջանում են մեծ ցեղամիություններ, սկսում է անդրկովկասյան ժողովուրդների, և այդ թվում հայերի, բուն պատմությունը:

**2. О древнем поселении около Ленинакана, ИОН, 10 (1952), 87- 97.**

Հողվածուժ քննարկվում են 1930-ական թթ. Լենինականի մսի կոմբինատի տարածքում բացված բնակավայրը, դամբարանադաշտը: Նյութերը, որոնք թվագրվում են Ք.ա. I հազ. առաջին չորս դարերով, իրենցից ներկայացնում են աշխատանքի գործիքներ և զենք (բրոնզե նետասլաքներ, կացիններ, դուժան, բրոնզե և երկաթե աղեղի ծայրեր, ներծկված գեղարդի մասեր, ձիասարք, մեծ պղնձե դանակ, կոլխիդա-կորանյան տիպի բրոնզե կացին): Հայտնի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լենինականի բնակավայրը հիմնադրվել էր Ք.ա. III-II հազ. սահմանին: Վաղ երկաթը եղել է հուշարձանի բնակեցման ամենածաղկուն շրջանը, երբ էրիսիսի երկիրը կարևոր դեր էր խաղում համակովկասյան պատմա-մշակութային հարաբերություններում:

**3. К вопросу о культуре Армении в VII- VI вв до.н.э., ИОН, 10 (1953), 67- 80.**

Շինարարական աշխատանքների ժամանակ 1929 թ. Խրտանոցի կիրճում, Գոլովինո գյուղի և Դիլիջան քաղաքի միջև Հայաստան-բերվել էր դամբարանադաշտ: Նույն տարում Հայաստանի Հնութ-յունների պահպանության կոմիտեն այստեղ ուսումնասիրել էր 22 կրոմլեխ: 1950 թ. ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արշավախումբը նոր հետազոտություններ կատարեց և պեղեց երեք կրոմլեխ: Դրանք խմբակային կամ անհատական թաղումներ էին, հարուստ և տիպական նյութով (խեցանոթներ, զարդեր, զենքեր ևն): Հողվածուժ հին նյութերը դիտարկվում են նոր պեղվածների հետ նույն համատեքստում: Ի մի են բերվում ուսումնասիրվող ժամանակաշրջանի հուշարձանները (Ռոնակ, Մատուռ, Հաղպատ, Կարմիր Բլուր, Դամնիսի ևն): Այս ամենի քննարկման արդյունքում Հ.Մարտիրոսյանը անդրադառնում է տեղական և ուրարտական մշակութային փոխհարաբերության հետ կապված հարցերին, փորձում է վերականգնել անդրկովկասյան հասարակության սոցիալ-տնտեսական կարգը այն ժամանակաշրջանում, երբ տարածաշրջանի պատմության մեջ նոր փուլ էր սկսվում՝ կապված նախնադարյան կարգերի վերջնական անկման հետ:

#### 4. О древнем поселении и могильнике близ Ленинакана, КСИИМК, 55 (1954), 106-116.

Պատահական նյութերի հիման վրա (տե՛ս սույն ցուցակի թիվ 2) լենինականյան հուշարձանի ուսումնասիրությունը անբավարար համարելով՝ 1952 թ. Հ.Մարտիրոսյանը նոր հնագիտական աշխատանքներ ձեռնարկեց, որոնք հնարավորություն ընձեռեցին ճշգրտել հուշարձանի թվագրության և բնորոշման հետ կապված խնդիրները: Ուսումնասիրվեցին երեք ոչ մեծ բլուրներ, որոնցից առաջինի վրա հետախուզահոր դրվեց. հայտնաբերվեցին կացարանների մնացորդներ: Մյուս երկու բլուրների վրա, որոնք գտնվում էին առաջինից դեպի հյուսիս և արևմուտք, բացվեցին 14 քարակղզի. վերջիններս նկարագրվում են մասնակիորեն: Հայտնաբերված նյութերի մեջ կան կավանոթներ, քարե, բրոնզե և երկաթե առարկաներ, բրոնզե գոտու մաս: Գտածոները վերաբերում են ժամանակագրական երեք խմբերի՝ Ք.ա. X-VIII, VII-VI և V-IV, դ.դ.: Նյութի մեկնաբանությունից ելնելով՝ Հ.Մարտիրոսյանը գալիս է այն եզրակացության, որ Հ.Մանանդյանի տեսակետը, ըստ որի այդ բնակավայրը պատկանել է կիմերական կամ սկյութական որևէ ցեղի, չի համապատասխանում իրականությունը:

#### 5. Раскопки в Головино. Результаты работ 1929 и 1950 гг., Ереван, АРА, 4 (1954), 116 с.

Այս աշխատանքը Հ.Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունից (տե՛ս սույն ցուցակի թիվ 1) ընդլայնված տարբերակի հրատարակումն է, ուր, հանձինս Գոլովինո հուշարձանի, ուսումնասիրվում է Հայաստանի և ընդհանրապես հարավային Կովկասի հնագիտական իրավիճակը Ք.ա. VII-VI դ.դ.: Աշխատանքը բաղկացած է նախաբանից և հինգ գլուխներից: Առաջին գլխում («Երկաթի դարի հնագիտական հուշարձանների համառոտ ակնարկ») ներկայացվում է Հայաստանի երկաթեդարյան հուշարձանների ուսումնասիրության պատմությունը՝ սկսած 1871թ.: Մանրամասն անդրադարձ է կատարվում 1929թ. սկսած Գոլովինոյի և հարակից հուշարձանների ուսումնասիրության և 1950թ. վերսկսված պեղումներին: Երկրորդ գլխում («Երկաթի լայն տարածման դարաշրջանի հնագիտական հուշարձանները Գոլովինո բնակավայրի մոտ») ներկայացվում է 1929-1950 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում Գոլովինոյում պեղված 22 կրոմլեխները: Հաջորդ գլխում («Համաժամանակյա հուշարձաններ») խոսք է դնում Ոռնակի, Ախթալայի, Կարմիր Բլուրի և այլ հուշարձանների մասին, որոնց

նյութական մշակույթը ուղղակի զուգահեռներ է գտնում Գոյովինոյում: Չորրորդ գլխում («Նրտանոցի կիրճի դամբարանադաշտի ինքնատարր և համաժամանակյա հուշարձանները») ներկայացվում է համապատասխան հուշարձանը և նրա նյութական մշակույթը: Վերջին գլխում («Նախնադարյան համայնական կարգի քայքայումը Հայաստանում»), բնութագրվում է Ք.ա. VII-VI դդ. Հայաստանի տնտեսական և հասարակական կարգը, նախնադարյան հարաբերությունների հոգևարքը ուրարտական և տեղական մշակույթների բախման պայմաններում:

1956

**6. Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX- VIII вв до. н. э.), ИОН, 9 (1956), 61- 84.**

ԳԱ Պատմության ինստիտուտի և Կիրովականի գավառադիտական թանգարանի արշավախումբը 1955 թ. Կիրովական-Մակարաշեն ճանապարհի վրա, Մակարաշեն գյուղի մոտակայքում ուսումնասիրեց մի դամբարանադաշտ բնորոշ քարակղային թաղումներով: Պեղված մի շարք դամբարանների թվում հեղինակը հատկապես կանգ է առնում հարուստ նյութերով ներկայացված № 2 (18 անոթ, գուրգ, նետալաքներ, ձիու գանգ արևելյան պատի հարավային անկյունում ևն) և № 3 (բրոնզե գոտի, դաշույն, երեք անոթ) դամբարանների վրա: Բերվում է լայն համեմատական նյութ (Ստեփանավան, Զարխեչ, Կարմիր Բլուր, Լալվար, Հոռոմ, Աստղածոր ևն): Պեղված դամբարանները թվագրվում են վաղ ուրարտական ժամանակաշրջանով (Ք.ա. IX-VIII դ.) և վկայում են տեղական և ուրարտական մշակույթների փոխազդեցության մասին: Քննվում է առաջավորասիական երկրների հետ առկա հարաբերությունների խնդիրը. նշվում է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում ուժեղանում են առնչությունները արևելյան և հարավ-արևելյան շրջանների (Թալիշ, Քուրդիստան, Լուրիստան), թուլանում արևմուտքի հետ:

**7. Рецензия на кн. Б.Б. Пиотровский, Кармир Блур III, ИОН, 2 (1956), 99- 102.**

Գրախոսականում ներկայացվում և գնահատվում է Կարմիր Բլուրի 1951-1953 թթ. պեղումներին նվիրված հերթական հատորը: Այդ տարիներին քաղաքի միջնաբերդում ուսումնասիրվել են 14 կացարաններ: Հատկապես կարևորվում է № 14 կացարանի պեղումները, ուր հայտնաբերվել են ուրարտական արքաների արձանագիր վահաններ և այլ արժեքավոր գտածոներ: Համապատասխան

երեք գլուխներում նկարագրվում են նախ Հուշարձանի ճարտարապետութունը, ապա՝ պեղածո նյութը (զինատեսակներ, զարդեր, ուրարտական և ներմուծված կնիքներ ևն), որոնք ուղեկցվում են նկարներով և աղյուսակներով: Աշխատութունն ունի երկու հավելված՝ նվիրված փայտե և մանածագործվածքային գտածոներին (Հեղինակներ՝ Ս.Ա.Թորոսյան, Ա.Ս.Վերխովսկի):

1957

**8. К характеристике города Тейшебаини, ИОН, 8 (1957), 83- 99.**

Հոդվածը նվիրված է 1955-1956թթ. Թեյշեբաինիի բնակելի թաղամասերի հարավ-արևմտյան մասում բացված համալիրների ուսումնասիրությանը: Հեղինակի գլխավոր նպատակն է պարզել ուրարտական և տեղական բնակչության փոխհարաբերության սահմանը: Ներկայացվում են երկու բնակելի բաղմասենյակ համալիրներ «ազնվական ուրարտացու տունը» և նրան արևմուտքում կից «երկրորդ բնակելի համալիրը»: Ճարտարապետության և նյութի ուսումնասիրությունը վկայում է, որ Թեյշեբաինիում, բացի ուրարտացիներից, գոյություն է ունեցել նաև տեղական բնակչություն, որին է վերաբերում քաղաքից հարավ գտնվող մեծ դամբարանադաշտը: Հոդվածում քննվում են նաև 1947-1956թթ. պեղումների ժամանակ հայտնաբերված քարե կուռքերը և ֆայոսները, որ վերաբերում են տեղական վաղերկաթեդարյան բնակչությանը:

**9. Հնագետի օրագրից, ՍՀ, 20 օգոստոսի (1957), 2.**

**Из дневника археолога, Сарм., 20 августа (1957), 2.**

Վերջին տասնամյակներում Հայաստանի տարածքում իրականացված հնագիտական աշխատանքները ներկայացվում են լայն ընթերցող շրջանակներին: Հայաստանը բնորոշվում է որպես թանգարան բաց երկնքի տակ: Նկարագրվում են բրոնզեդարյան, ուրարտական, հելլենիստական հուշարձաններ և առանձին գտածոներ: Հեղինակը անդրադառնում է հայ հնագիտությանը և հուշարձանների պահպանությանը առնչվող առկա խնդիրներին:

10. Научная конференция Института истории материальной культуры АН СССР и Института истории АН Арм. ССР, посвященная археологии Кавказа, ИОН, 1 (1957), 107- 126.

Հողվածը հաղորդում է 1956 թ. հոկտեմբերի 22-28-ը Երևանում տեղի ունեցած Կովկասի Հնագիտությանը նվիրված գիտաժողովի մասին: Հայաստանի Պատմության և ԽՍՀՄ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտների Համատեղ նիստերին մասնակցեցին խորհրդային տարբեր Հանրապետություններից ժամանած Հյուրեր: Գիտաժողովը բացեցին ակադ. Հ.Օրբելին և Բ.Ռիբակովը: Քննարկվեցին Հնագույն, Հին և միջնադարյան կովկասյան Հնագիտությանը վերաբերող խնդիրներ, վեր Հանվեցին ձեռքբերումները և թերացումները: Գիտաժողովն անցավ շատ արդյունավետ:

1958

11. Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՏՀԳ, 10 (1958), 63-84 (Հեղինակակից՝ Հ.Հ.Մնացականյան).

Урартский колумбарий Нор-Ареша, ИОН, 10 (1958), 63- 84 (соавтор А.А.Мнацаканян).

Հողվածը նվիրված է 1957 թ. Երևանի Նոր Արեշ ավանում, էրբուլների ամրոցից 2-3կմ արևմուտք, Հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված ուրարտական կոլումբարիի քննությանը: Ուսումնասիրվեցին երեք մասնակիորեն պահպանված դամբարաններ, որոնք իրենցից ներկայացնում էին հանգուցյալի աճյունը պարունակող ուրարտական կարմիր կավե սափորներ և տեղական արտադրության կավե ամաններ դամբարանային իրերով: Սափորները դրված էին փոսերի մեջ, երեսպատված էին մանր քարերով, իսկ աճյունասափորները՝ ծածկված տուֆե սալաքարերով: Օգտագործվել է դիակիլիզման ծեսը: Բացի ուրարտական նյութերից (ապարանջաններ, գնդասեղներ, կնիքներ, բրոնզե գոտիներ) հայտնաբերվել են նաև կորանյան շիգղեր: Հեղինակը հատկապես կանգ է առնում բրոնզե գոտիների և նրանց պատկերազրության վրա հինարևելյան զուգահեռների համատեքստում: Ըստ Հ.Մարտիրոսյանի, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին և էրբուլնի Հնագիտական միևնույն հուշարձանի մասերն են հանդիսանում:

12. Идолы из раскопок Кармир- Блура, ИФЖ, 2 (1958), 114- 139.

1947-1957թթ. Թեյշերաինի քաղաքի պեղումների ընթացքում, նախաուրարտական շերտից (Ք.ա. XIII-VIII դդ.) հայտնաբերվեցին

կանացի տուֆե կուռքեր և ֆալլիկ արձաններ, որոնց պաշտամունքային գործառնության բացահայտմանն է նվիրված հոգվածը: Դրանք արտահայտում են տեղաբնիկ երկրագործների ու անասնապահների պատկերացումները բուսական և կենդանական աշխարհի գերբնական ուժերի մասին, կապված են հիմնականում պտղաբերության գաղափարի հետ: Այս պատկերացումները իրենց արմատներով գնում են դեպի նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջանները: Ուսումնասիրվում է ընդհանրապես կանացի արձանիկների երևույթը Հայկական լեռնաշխարհում Ք.ա. II-I հազ. սահմանագլխին, համեմատական նյութ է բերվում Առաջավոր Ասիայից և էգեյան աշխարհից:

**13. Раскопки жилых кварталов города Тейшебаини в 1955-1956гг, СА, 1 (1958), 163-170.**

*Տե՛ս սուլյն ցուցակի թիվ 8:*

**14. Ախթալայի Հնագիտական գանձը, ՍՀ, 26 ապրիլի (1958), 4. Археологический клад Ахталы, САрм., 26 апреля (1958), 4.**

Ախթալայում իրականացվող շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեցին մետաղյա և կավե իրեր պարունակող դամբարաններ (որոնք, դեռևս XIX դ. վերջերին մասամբ ուսումնասիրել էր Ժ. դը Մորգանը), ինչպես նաև Ք.ա. II-I հազ. սահմանով թվագրվող բրոնզե միատիպ գործիքների ու զենքերի մի հարուստ հավաքածու, որն ամփոփված էր բրոնզե կաթնայի մեջ ու զետեղված հատուկ նպատակով պատրաստված փոսում: Գանձը բաղկացած էր ձուլածո զանգվածեղ կացիններից ու կացնակերպ ձեռքի հատիչներից: Այն հանգամանքը, որ անդրկովկասյան գանձերը, որպես կանոն, բաղկացած են միատիպ առարկաների մեծաքանակ խմբերից և մեծ տարածում են գտել Հեռավոր վայրերում, ուր նրանց արտադրությունը բացառված էր, խոսում է այն մասին, որ դրանք իրականում փոխանակային միավորի գեր են խաղացել:

**15. Ախթալայի Հնագիտական գանձը, Լրաբեր (Նյու Յորք), 3 հունիսի (1958), 2.**

**Археологический клад Ахталы, Вестник (Нью Йорк), 3 июня (1958), 2.**

*Տե՛ս սուլյն ցուցակի թիվ 14:*

16. Բ.Բ. Պիոտրովսկի, *ՏՀԳ*, 4 (1958), 99-102.

Б.Б. Пиотровский, *ИОН*, 4 (1958), 99-102.

Հորվածը նվիրված է ականավոր Հնագետ, ուրարտագետ Բ. Պիոտրովսկու ծննդյան 50-ամյակին: Լինելով նշանավոր գիտնականներ Ն. Մառի, Հ. Օրբելու աշակերտը, Բ. Պիոտրովսկին հավասարապես տիրապետում էր հնագիտությանը և արևելագիտությանը: 1930-ական թթ. սկզբներից հնագետի կյանքը անմիջականորեն կապվեց Հայաստանի հետ: Նրա գիտական գործունեությունը սկսվեց Հայաստանի հնագույն դամբարանադաշտերի, բնակավայրերի և կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությունը: 1939 թ.-ից նա սկսեց պեղել Կարմիր Բլուրը: Այժմ ունի մոտ 70 ուսումնասիրություն՝ նվիրված Կովկասի, եգիպտոսի և այլ տարածքների հնագիտության խնդիրներին: Բ. Պիոտրովսկին մեծ ավանդ է ներդրել Հայաստանի հնագույն պատմության ուսումնասիրման գործում:

1959

17. Комплекс изделий из могильника Такиа (Агвеса-зор), *ИОН*, 11-12 (1959), 87-96 (соавтор Т.С. Хачатрян).

Արագածի ստորոտին գտնվող Թաքիա (Աղվեսաձոր) բնակավայրի մոտ դեռևս 1929 թ. Ս. Տեր-Հակոբյանը հայտնաբերել և ուսումնասիրել էր քարարկղային դամբարաններ՝ նյութերը հանձնելով էջմիածնի թանգարանին, որտեղից 1931 թ. դրանք բերվել էին ՀՍՍՀ ԳԱ Պատմության պետական թանգարան: Երբ Հ. Մարտիրոսյանը սկսեց այս հավաքածուի ուսումնասիրությունը, պեղումների փաստագրման մասին տեղեկությունները այլևս չէին պահպանվել: Թաքիական հավաքածուն բաղկացած էր բրոնզե աշխատանքային գործիքներից, զենքերից, բրոնզե, քարե և մածուկե զարդեղենից և տարբեր կավանոթներից, որոնք թվագրվում են Ուշ բրոնզի դարով (Ք.ա. II հազ. վերջ - I հազ. ամենակիզը): Լայն գուգահեռներ բերելով՝ հեղինակը փորձում է բացահայտել Հայաստանի առկա մշակութային և տնտեսական առնչությունները Կովկասի այլ շրջանների և Փոքր Ասիայի հետ:

**18. К предыстории древнейших этапов культуры Армении, ИФЖ, 1 (1960), 91- 109.**

Հենդելով Հինարևելյան հնագիտական դասական հուշարձանների ուսումնասիրության արդյունքների վրա, հեղինակը փորձում է համակարգել, թվագրել և բնութագրել Հին բրոնզի դարաշրջանի (Ք.ա. XX-XVII դդ.) նյութական մշակույթը՝ մասամբ պեղածո, մասամբ էլ պատահականորեն հայտնաբերված իրեղեն հուշարձանների (Շենգավիթ, Լենինական, Թեղք, Թաղաքենդ, Կարմիր Վանք ևն) հետազոտության հիման վրա, որոնց մասին մեկնաբանությունները բազմիցս թյուր դիտողությունների առիթ են տվել: Հիմնական շեշտը դրվում է մետաղին առնչվող առարկաների վրա (կաղապարներ, աշխատանքային գործիքներ, ղենքեր ևն): Ունենալով բազմաթիվ առնչություններ Հինարևելյան երկրների հետ՝ Հայաստանը ներկայանում է որպես մշակութային ինքնուրույն խուռի-սուրբարեական մի օջախ, ուր համեմատաբար բարձր զարգացման էին հասել երկրագործությունը, անասնապահությունը և արհեստները (հատկապես մետաղագործությունը):

**19. Город Тейшебаини по раскопкам 1947- 1958гг, Ереван, Изд. АН Арм. ССР, 1961, 157 с.**

Մենագրությունը նվիրված է 1947-1958 թթ. Թեյշեբաինի պեղումների արդյունքներին: Ներկայացվում են բնակելի թաղամասերի, նախաուրարտական բնակատեղիի և վաղ հայկական դամբարանադաշտի նյութերը, որոնց պեղումները 1955-1958 թթ. ընթացքում ղեկավարել է Հ.Մարտիրոսյանը: Հիմնական ուշադրությունը սեռված է քաղաքի ոչ ուրարտական տարրի թողած ժառանգություն և վերջինիս ուրարտական մշակույթի հետ ունեցած փոխհարաբերության ուսումնասիրությանը: Աշխատանքը բազմապիսի է նախաբանից, յոթ գլուխներից, վերջաբանից և ցանկերից: Առաջին գլուխը նվիրված է Կարմիր Բլուրի նախաուրարտական տոհմական բնակավայրի (Ք.ա. XIII/XII-VIII/VII դդ.) ճարտարապետությունը, որի նյութական արտադրության մնացորդները և բնակավայրի թվագրման հարցը քննվում են հաջորդ գլխում: Երրորդ գլուխը վերաբերում է Կարմիր Բլուրի Հին երկրագործների զբաղմունքներին և դադափարափոսությունը: Միջնաբերդի պեղումների արդյունքները և նրա մշակութային հարաբերությունները տեղական ցեղերի հետ քննարկվում են չորրորդ գլխում: Հինգերորդ գլխում ներկայացվում են Թեյշեբաինի բնակելի թաղամասերի

(Ք.ա. VIII-VII/VI դդ.) պեղումները, իսկ հաջորդ գլխում՝ վերջինիս պեղումներով վերականգնվող նյութական մշակույթը և թաղամասերի թվագրության հարցը: Վերջին գլուխը նվիրված է քաղաքի տարածքում գտնվող վաղ հայկական դամբարանադաշտին (Ք.ա. V-IV դդ.): Օգտագործելով նաև ազգագրության և գրավոր աղբյուրների ընձեռած տվյալները՝ Հ.Մարտիրոսյանը վերականգնում է կարմիրբլուրյան և նրան ժամանակակից հայաստանյան հասարակության տնտեսությունը, նյութական ու հոգևոր մշակույթը, արտաքին կապերը, վաղ հայկական-ուրարտական մշակութային փոխհարաբերության խնդիրը և ընդհանրապես՝ ճշտում է քաղաքի խաղաղած դերը տվյալ դարաշրջանի պատմամշակութային հարաբերություններում:

20. Հովսեփ Օրբելի, Ավանգարդ, 22 հուլիսի (1961), 2- 3.

Иосиф Орбели, Авангард, 22 июля (1961), 2- 3.

Էրմիտաժի տնօրեն, ՀՀ ԳԱ Հիմնադիր ակադ. Հ.Օրբելին ներկայացվում է որպես առաջամարտիկ քաղաքացի, մեծ հայրենասեր, դորեղ միտք, մարդասեր, և, չնայած խոշորագույն գիտնական լինելուն, պարզակենցաղ մի մարդ: Վերականգնվում է նրա մեծ վաստակը հայ և համաշխարհային գիտությանը: Ենչտվում է, որ իր գիտական գործունեության ընթացքում ակադեմիկոսն ունեցել է լայն տարածական (Կոփկաս, Առաջավոր Ասիա, Եվրոպա), ժամանակագրական (հնագույն, հին և միջնադարյան պատմություն) ու թեմատիկ (հնագիտություն, պատմություն, էպոսագիտություն, լեզվաբանություն, վիճաբարագիտություն ևն) հետաքրքրություններ և այս բոլորին տիրապետել է նույն մակարդակով: Հ.Մարտիրոսյանը հատկապես ուշագրություն է դարձնում Անիի պեղումներին Հ.Օրբելու մասնակցությանը:

1962

21. Գիտնականը, մարդը, քաղաքացին, Յ.Օրբելու ծննդեան 75-ամեակի առթիւ, Լրաբեր, 19 ապրիլի (1962), 1-2.

Ученый, человек, гражданин, К 75- ой годовщине со дня рождения И.Орбели, Вестник, 19 апреля (1962), 1- 2.

Հոդվածը նվիրված է ակադ. Հ.Օրբելու 75-ամյա տարեդարձին: Վերականգնվում է գիտնականի մեծ վաստակը հայ և համաշխարհային գիտությանը: Տե՛ս սույն ցուցակի թիվ 20:

22. Գիտնականը, մարդը, քաղաքացին, Հ.Օրբելու 75-ամյակի առթիվ, Երևան, 19 մարտի (1962), 3.

Ученый, человек, гражданин, К 75- летию И.Орбели, Ереван, 19 марта (1962), 3.

Տե՛ս սուլյն ցուցակի թիվ 21:

23. Հնագէտի օրագրից, Լրաբեր, 17 մայիսի (1962), 1-2.

Из дневника археолога, Вестник, 17 мая (1962), 1- 2.

Հոդվածը նվիրված է 1961թ. Հայաստանում բրոնզ-երկաթի դարաշրջանի հուշարձանների (Էլար, Շենդավիթ, Գառնի, Լճաշեն, Արթիկ, Էրեբունի, Թեյշեբաինի) պեղումների արդյունքներին: Խոսվում է համապատասխան ժամանակաշրջանի Հայաստանի արհեստների (հատկապես մետաղագործության), նյութական մշակութի, արտաքին կապերի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին:

1963

24. Новые данные по истории города Тейшебаини, ИФЖ, 3 (1963), 221- 233.

Թեյշեբաինիի բնակելի թաղամասերի պարբերական պեղումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում Գ.ա. VIII-VII դ.դ. ուրարտական քաղաքների ճարտարապետական առանձնահատկությունների վերականգնման տեսանկյունից: Մինչև 1959 թ. մասնակի ուսումնասիրություն են ենթարկվել քաղաքի գլխավոր փողոցի երկայնքով տեղադրված հինգ թաղամասերի մնացորդները: 1959 թ. սկսվեց հարավ-արևելյան և հարավ-արևմտյան թաղամասերի հետազոտությունը, որտեղ ճշտվեց առնվազն վեց խոշոր առանձնատների մնացորդների առկայությունը, որոնցից միայն մեկն է մանրամասն ուսումնասիրվում սույն հոդվածում: Այդ շինությունից չորս բաժիններից յուրաքանչյուրը բաղկացած է տաս սենյակներից՝ իրենց քառասյուն գմբեթավոր դահլիճներով, բնակելի սենյակներով, տնտեսական բաժիններով, միջանցքներով ևն: Հնագիտական գտածոները ուղղակի զուգահեռվում են միջնաբերդի նյութին և ցույց տալիս, որ թաղամասը կառուցվել է միջնաբերդի հետ միասին կամ քիչ ավելի շուտ: 1959-1960 թթ. շարունակվում էին նաև նախաուրարտական բնակավայրի երկու համալիրներին պատկանող շինությունների պեղումները, որոնք պատրիլոկալ ընտանեկան մեծ համայնքների իրար կից կացարանների առանձին թաղեր են, որոնցից և բաղկացած էր նախաուրարտական ողջ բնակավայրը: Հաջորդական չորս շերտերի և դամբարանների պեղումների ընթացքում հայտնաբերված նյութը ցույց է տալիս,

որ այստեղ բնակվել են երկրագործներ, որոնք լավ դիտելիքներ են ունեցել մետաղագործության վերաբերյալ և իրենց դոյուլթյան ընթացքում (Ք.ա. XIII դ. վերջ-VIII դ. առաջին քառորդ) ակտիվ կապերի մեջ են գտնվել առաջավորասիական շրջանների հետ:

1964

25. *Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, Изд. АН Арм. ССР, 1964, 305 с.*

Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան Հնագիտության՝ մինչև դրքի լույս ընծայման ժամանակաշրջանը Հայտնի Հնագիտական սովյալների դասակարգմանը, նյութական մշակույթի, տնտեսութ-յան, արտաքին հարաբերությունների, մշակութային ժառանգակա-նության խնդիրներին նվիրված սույն աշխատանքը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից և համապատասխան աղյուսակնե-րից: Առաջին գլխում («Հայաստանի պղինձ-բրոնզեդարյան մշա-կույթի վաղ փուլերը») տրվում է բրոնզ-երկաթի դարաշրջանների Հնագիտական հուշարձանների ուսումնասիրության պատմություն-ը, ներկայացվում է Հին և Միջին բրոնզի դարաշրջանների նյու-թական մշակույթը: Երկրորդ գլխում («Ուշ բրոնզի դարաշրջանի հուշարձանները. Ք.ա. XIII-X դդ.») ներկայացվում է համապա-տասխան դարաշրջանի նյութական մշակույթը: Հատուկ ուշադ-րություն է դարձվում Կարմիր-Բլուրի նախաուրարտական բնակա-վայրին: Երրորդ գլուխը («Հայաստանի մշակույթի դարգացման հինարևելյան փուլի հուշարձանները») բաղկացած է համապա-տասխանաբար երկու մասից, որոնցից առաջինում ներկայացվում են Հայաստանի Վաղ երկաթի լայն տարածման առաջին շրջանի, իսկ երկրորդ մասում՝ ուրարտական ժամանակաշրջանի տեղական և ուրարտական (չեչտը դրվում է Արարատյան դաշտավայրի վրա) հուշարձանները: Վերջաբանում ի մի են բերվում ստացված արդ-յունքները: Հեղինակին հաջողվում է պարբերացնել և ժամանա-կագրել բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի Հնագիտական իրավի-ճակը՝ օգտագործելով առաջավորասիական Հնագիտության սովյալ-ները: Լեռնաշխարհը բնորոշվում է որպես միջանկյալ գոտի հյու-սիսային Կովկասի, ուսսական տափաստանների և Առաջավոր Ա-սիայի միջև:

26. *О периодизации археологических памятников Ар-мении эпохи бронзы и раннего железа, СА, 3 (1964), 21-36.*

Պարբերացման հիմնահարցի համատեքստում ընդհանուր դրծե-րով բնութագրվում են Ք.ա. III-I հազ. Հնագիտական իրավիճակը

և նրան առնչվող խնդիրները: Աշխատանքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ պարբերացման խնդրի լուծումը կատարվում է առաջավորասիական հնագիտությունից համատեքստում՝ լայն համեմատական նյութի ներգրավմամբ: Վեր են հանվում Հին, Միջին, Ուշ բրոնզի և Վաղ երկաթի հնագիտական իրավիճակների օրինաչափությունները:

**27. Аргиштихинили раскрывает тайну, Коммунист, 11 октября (1964), 1.**

Արգիշտիխինիլի պեղումների նախնական արդյունքների դիտահանրամատչելի ներկայացումն է: Համառոտ քննվում են ուրարտական քաղաքի ճարտարապետությունը, նյութական մշակույթը, կարևոր դիրքը միջազգային ճանապարհներին, սեպագիր աղբյուրների տեղեկությունները: Հեղինակը հույս է հայտնում, որ գալիք պեղումները կարևոր տեղեկություններ կտան ուրարտական կյանքի տարբեր բնագավառների վերականգնման համար:

1965

**28. Раскопки Аргиштихинили.- Материалы сессии посвященной итогам археологических и этнографических исследований 1964 г. в СССР, Тезисы докладов, Баку, 1965, с. 89.**

Թեղիսում հեղինակը հակիրճ անդրադառնում է Արգիշտիխինիլի պեղումների նախնական արդյունքներին: Սահմանվում է հուշարձանի մոտավոր շերտագրությունը՝ Վաղ բրոնզից մինչև միջնադար:

**29. Հնագիտական մեծ նորույթ, ՍՀ, 11 հուլիսի (1965), 2.**

**Большая археологическая новизна, САРМ., 11 июля (1965), 2.**

Հոդվածը նվիրված է Արարատյան դաշտի կենտրոնում գտնվող Թեղուտ պղնձեդարյան հուշարձանի պեղումների արդյունքներին: Համառոտ ներկայացնելով բնակավայրին բնորոշ ճարտարապետությունը, քարե առարկաների արտադրությունը, խեցեգործությունը և նյութական մշակույթն ընդհանրապես՝ հեղինակը փորձ է կատարում վերականգնել հնարավոր առաջավորասիական կապերը: Բննվող մշակույթը վերագրում է խուռիական ցեղերին:

30. Պատմության քառուղիներով. Բրոնզեդարյան Հայաստանի անցյալից, ՀԶ, 21 նոյեմբերի (1965), 6.

По тропам истории. Из прошлого бронзового века Армении, ЗР, 21 ноября (1965), 6.

Մատչելի լեզվով վերականգնվում է Վաղ (Կուր-Արաքսյան), Միջին (Լոռի/Թուեղք, Սյունիք/Արցախ/Փայտակարան, Արարատյան դաշտ, Սպեր/Տայք, Սասնո կողմեր կենտրոններով) և Ուշ (Լճաշենյան) բրոնզի դարի Հայաստանի պատմա-մշակութային իրավիճակը: Հայկական լեռնաշխարհը ներկայացվում է որպես մետաղագործական խոշոր կենտրոն, որն արդեն Ուշ բրոնզում հասել էր հինարևելյան տիպի պետական կազմավորումների մակարդակին: Լեռնաշխարհի բնիկ խուռի-սուբարեական ցեղերը, բրոնզեդարյան Հայաստանի մշակութային ստեղծողներն էին, որոնց մարդաբանական տիպը անցել է արդի հայերին:

1967

31. Հայաստանի էնեոլիթյան մշակութային մեկնարանման հարցի շուրջը, ԼՀԳ, 3 (1967), 52-62 (հեղինակակից Ռ.Մ.Թորոսյան).

К. вопросу об интерпретации энеолитической культуры Армении, ВОН, 3 (1967), 52-62 (соавтор Р.М.Торосян).

Հողվածի հիմնական նպատակն է դիտարկել Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան մշակութային առաջավորասիական զարգացումների համատեքստում: Այս տեսանկյունից քննվում են լեռնաշխարհի արևելյան (Թեղուտ, Մխլու Թափա, Քյուլթեփե, Գեոյ Թեփե) և Արևմտյան (Շամիրամալթի, Հինձոր, Հեքիմհան ևն) շրջաններից հայտնաբերված հուշարձանների նյութերը: Բերվում է լայն համեմատական նյութ առաջավորասիական հուշարձանների հետ (Հասուն, Հալաֆ, Չաթալ հույուք, Հաջիլար, Մերսին ևն): Փորձ է կատարվում ցույց տալ լեռնաշխարհի մշակութային միասնականությունը Ք.ա. VI-IV հազ. և առնչությունների հիմնական ուղղվածությունը: Քննվում են արհեստներին՝ հատկապես մետաղագործությանը վերաբերող հարցեր:

32. Գրախոսություն/ Рецензия на кн. Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармир Блура, Ереван 1966, ИФЖ, 2/3 (1967), 324-328.

1961-1963 թթ. Թեիշեբախիսի միջնաբերդի վերին շերտի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին ուրարտական խոշոր տեքստի ընդարձակ հատվածներ: Ն.Վ. Հարությունյանի աշխատությունը նվիրված է այս արձանագրության թարգմանությանը

և մեկնաբանությանը: Արձանագրություններում պահպանվել են տեղեկություններ Ռուսա II պաշտամունքա-շինարարական գործունեության մասին, ուր ի հայտ են գալիս մի շարք նոր բառեր: Հեղինակը վերականգնում է Աղա երկրի պատմությունը Ուրարտուի ընդհանուր պատմության համատեքստում: Գրախոսը բարձր է գնահատում Հեղինակի կատարած աշխատանքը և իր կողմից, որպես հնագետի, փորձում է գրավոր և հնագիտական տվյալների համընկնությունը հաստատող զուգահեռներ բերել:

### 33. Раскопки Аргиштихинили, СА, 4 (1967), 220- 236.

Հոդվածում ներկայացվում են Արգիշտիխինիլի քաղաքի 1962-1967 թթ. պեղումների արդյունքները՝ ընդհանուր տեղագրությունը, բնակավայրը, նրա շերտագրությունը և արևմտյան ամրոցից հյուսիս-արևմուտք գտնվող դամբարանադաշտը, հնագիտական գտածոները, ճարտարապետությունը (ամրոցները, տաճարները, պալատները, արհեստանոցները, ջրանցքները, այգիները), հայտնաբերված սեպագրերը: Վերականգնվում է քաղաքի տնտեսությունը, արհեստները: Արգիշտիխինիլին դիտվում է հինարևելյան քաղաքային մշակույթի համատեքստում:

### 34. Археологическое изучение Армении за годы советской власти, СА, 4 (1967), 26- 47 (соавтор Б.Н.Араке- лян).

Ընդհանուր առմամբ ուրվագծվում են Հայաստանում հնագիտության զարգացման հիմնական փուլերը, ձեռք բերված արդյունքները, զարգացման հեռանկարները և առկա խնդիրները: Հոդվածում ներկայացվում են Հայաստանի նախնադարյան, ուրարտական, վաղ հայկական և միջնադարյան հուշարձանները: Քննարկման ընթացքում շոշափվում են Հայկական լեռնաշխարհի մշակույթների ծագումնաբանության, պարբերացման, ժամանակագրության և ընդհանուր բնութագրման հետ կապված հարցեր: Հեղինակները չեն սահմանափակվում Հայաստանի Հանրապետության տարածքով և ներառում են նաև Արևմտյան Հայաստանից հայտնի հնագիտական նյութերը:

### 35. Հագարամյակների վարագույրը ետ է դնում, Գարուն, 6 (1967), 44- 50.

### Занавес тысячелетий уходит назад, Гарун, 6 (1967), 44- 50.

Հիմնականում նվիրված է 1966թ. Հայաստանում իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքներին (Գեղամա և Սյունյաց լեռների ժառանգատկերներ, Զրահովիտ, Արթիկ, Մեծա-

մոր, Արգիշտիխիւնիլի, Էրեբունի, Թեյշեբախի, Լճաշեն, Իջևան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցներ):

1968

**36. Археологические открытия в Армении, АО 1967, (1968), 308-313.**

Հորվածում ներկայացվում են Հայաստանում 1966-1967 թթ. իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքները: Առանձին բնութագրվում են հուշարձանները (Բյուզ թափա, Ծաղկունք, Թեղուտ, Զրահովիտ, Արթիկ, Մեծամոր, Գառնի, Արգիշտիխիւնիլի, Էրեբունի, Ենոքավան, Երևանի և Արգնիի քարեդարյան հուշարձաններ, Գեղամա լեռների ժայռապատկերներ), իմաստավորվում է նրանց դերը և ուսումնասիրութայան անհրաժեշտութունը:

**37. Рецензия на кн. С.Г.Сардарян, Первобытное общество в Армении, Ереван 1967, СА, 3 (1968), 255-262 (соавтор Р.М.Мунчаев).**

Գրախոսվող աշխատանքը ենթարկվում է մանրամասն քննադատութայն: Հիշատակելով գրքի լավ կողմերը՝ գրախոսները հիմնականում մեղադրում են հեղինակին պատրաստի սխեմաներ ընդունելու և դրանք արհեստականորեն Հայ հնագիտութայն մեջ կիրառելու, աղբյուրների չհղելու, ժամանակագրական համակարգի խախտումների, որոշ հարցերում ոչ կոմպետենտ լինելու մեջ:

**38. Նո՞ր է արդյոք լուսաբանումը, ՍՀ, ապրիլի 5 (1968), 4. Ново ли освещение?, САРМ, 5 апреля (1968), 4. Տես սույն ցուցակի թիվ 37:**

**39. Выдающийся археолог и арменист. К 60-летию члена-корреспондента Академии наук Армянской ССР Б.Пиотровского, Коммунист, 14 февраля (1968), 1.**

Էրմիտաթի տնօրեն, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Բ.Պիոտրովսկին ներկայացվում է որպես համաշխարհային գիտութայնը մեծ ավանդ ունեցող գիտնական, որի կյանքն ու գործունեությունը անմիջականորեն կապված է Հայաստանի հետ: Տես սույն ցուցակի թիվ 16:

40. Из глубин тысячелетий, Коммунист, 18 июня (1968), 3.

Հանրամատչելի ձևով ներկայացվում են Հրազդանի ավազանի քարանձավների, Գեղամա լեռների ժայռապատկերների վերաբերյալ կատարված աշխատանքները:

1969

41. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, ՀՀՀ, № 2, պրակ II, Երևան, 1969, 70 էջ (ամփոփումը ռուս. և անգլ.):

Поселения и могильники эпохи поздней бронзы, АПА, N 2, вып. II, Ереван, 1969, 70 с. (резюме на русск. и англ.).

Հայաստանի ուշբրոնզեդարյան պատմամշակութային իրավիճակի հետազոտությունը նվիրված սույն աշխատությունը բաղկացած է ներածությունից չորս գլուխներից, գրականության և աղյուսակների ցանկերից, ինչպես նաև քարտեզից: Առաջին գլխում («Ուշ բրոնզեդարյան հուշարձաններ») առանձին քննարկման են ենթարկվում կիլիսյան բնակատեղիները (Թաչբուռուն, Մեծամոր, Կարմիր Բլուր, Լճաշեն ևն) ու դամբարանադաշտերը (Թաղաքենդ, Տոլորս, Լենինական, Գեղարոտ ևն): Երկրորդ գլխում («Նյութական մշակույթ») խոսք է գնում աշխատանքային դործիքների, դենքերի, արվեստի առարկաների, խեցեգործական արտադրանքի մասին: Հաջորդ գլխում («Ուշբրոնզեդարյան հուշարձանների թվագրման հարցը») առաջավորասիական նյութի հիման վրա փուլաբաժանվում և թվագրվում է ուսումնասիրվող դարաշրջանը. առանձնացվում են երեք փուլեր՝ I փուլ (Լճաշենյան)-Ք.ա. XIII-XII դդ., II փուլ (Ոռնակյան)- Ք.ա. XII դ. վերջ-XI դ., III փուլ (Թաքիայի)- Ք.ա. XI դ. վերջ - X դ.: Վերջին չորրորդ գլխում («Հայաստանը ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանում»): Հնագիտական Հայտնի տվյալների օգտագործմամբ քննարկվում են տնտեսությունը, սոցիալական հարաբերություններին, նյութական մշակույթին, արտաքին հարաբերություններին վերաբերող հարցեր:

42. Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ, 3 (1969), 191-208.

Новые памятники первобытной культуры Армении, ИФЖ, 3 (1969), 191-208.

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքում 1967-1968 թթ. ուսումնասիրված մի շարք նախնադարյան քարանձավների և ժայռապատկերների քննությունը (Արագած, Գեղամա, Վարդենիսի և Արեգունի լեռներ, Հրազդան, Ազատ և Ուխտակունք գետերի ավազան): Վարդենիսի և Գեղամա լեռներում հայտնաբերվեցին Ք.ա. VI-I հազ. թվադրվող ժայռազրերի 65 կուտակումներ: Մերձսևանյան և լուսակերտյան չորս քարայրները Հրազդանի ավազանում, վերաբերում են աշել-մուստերյան ժամանակաշրջանին: Այստեղ, հնագիտական աշխատանքների ընթացքում, հայտնաբերվել են հաղարավոր քարե գործիքներ և վայրի կենդանիների ոսկորներ: 1967-1968թթ. հնագիտական աշխատանքները մեծապես հարստացրեցին առկա պատկերացումները նախնադարյան Հայաստանի մասին:

1970

43. Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ, ԼՀԳ, 9 (1970), 54-70.

Некоторые предварительные данные классификации наскальных изображений, ВОИ, 9 (1970), 54-70.

Հոդվածում քննարկվում են 1966-1969 թթ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի աշխատանքների արդյունքները Գեղամա լեռներում: Այստեղ հայտնաբերված ժայռապատկերների կուտակումները աչքի են ընկնում սյուլեոսային, թեմատիկ, ոճային բազմազանությամբ և ընդգրկում են մի շարք հաջորդական, ծաղումնաբանորեն իրար առնչվող ժամանակագրական խմբեր: Հոդվածում փորձ է կատարվում, լեռնաշխարհի այլ շրջաններից հայտնի նյութերի համատեքստում, ընդհանուր առմամբ դասակարգել այդ ժայռապատկերները: Թվադրման համար հիմք են հանդիսանում այլ, ավելի հստակ ժամանակագրական սահմաններ ունեցող առարկաները և նրանց պատկերազրույթյունը (խեցեղեն, արձանիկներ, բրոնզե գոտիներ, նետալափներ, դամբարանային քարերի պատկերներ ևն): Առանձնացվում են հինգ ժամանակագրական խմբեր, որոնք ընդգրկում են Ք.ա. VI-I - հաղարամյակները:

44. Исследования пещер в ущелье реки Раздан и наскальные изображения в Гегамских горах и Шамираме, АО 1969, Москва 1970, с. 384.

Հաղորդումը վերաբերում է Հրազդան գետի ալազանում Հայտնաբերված քարեդարյան նոր հուշարձաններին, Գեղամա լեռների ժայռապատկերներին (Հատկապես կարևորվում է Մեծ Պայտասարը): Ներկայացվում են նաև Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող կրոմլեխները, որոնց սպերից շատերի վրա նկատվում են կենդանիների, մարդկանց, աստեղային նշանների պատկերներ, որոնք նման են Գեղամա լեռների ժայռապատկերներին: Դամբարանադաշտին կից կա բազալտե մեծ քարերից կառուցված սրբարան:

1971

45. Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀՀ № 6, պրակ II, Երևան, 1971, 66 էջ (Հեղինակակից՝ Հ.Ռ.Իսրայելյան) (ամփոփումը ուս. և անգլ.):

Наскальные изображения Гегамских гор, АПА № 6, вып. II, Ереван 1971, 66 с. (соавтор А.Р.Израелян) (резюме на русск. и англ.).

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը Հ.Մարտիրոսյանի գլխավորությամբ 1966-1967 թթ. ընթացքում Գեղամա լեռներում ուսումնասիրեց ժայռապատկերներ, որոնց նախնական տվյալների հրապարակմանն է նվիրված սույն Հատորը: Հայտնաբերված ժայռապատկերների 56 հիմնական խմբերը Գեղամա լեռների մոտ 120-130 կմ քառակուսի ընդհանուր տարածություն և 2000-3000 մ բարձրության վրա են (Սպիտակասար, Պայտասար, Զիարաթ, Նազալ Թափա, Թոխմախան Գյուլ): Օգտագործելով Համաշխարհային ժայռապատկերագրության տվյալները՝ Հեղինակը փորձ է կատարում մեկնաբանել և մոտավորապես թվագրել (Ք.ա. VI-I Հազ.) ուսումնասիրված ժայռապատկերները, որի ընթացքում վերականգնվում է Հայկական լեռնաշխարհի որսորդ-անասնապահական նեոլիթ-բրոնզեդարյան բնակչության աշխարհընկալումը: Ժայռապատկերները հիմք են հանդիսանում ոչ միայն լեռնաշխարհի բնիկ ցեղերի պաշտամունքի, աստղագիտական գիտելիքների, այլև կենցաղի, տնտեսության հիմնական ձևերի վերականգնման համար: Լայնորեն օգտագործվում են Հայ և Հինարևելյան առասպելաբանության տվյալները:

46. Նախապատմական և պրոտոպատմական դիտությունների VIII միջազգային կոնգրեսը, ԼՀԳ, 11 (1971), 110.

VII международный конгресс доисторических и протисторических наук, ВОИ, 11 (1971), 110.

1971 թ. սեպտեմբերի 9-15-ը ընկած ժամանակահատվածում Բելգրադում տեղի ունեցավ Հնագետների խոշոր համաժողով, որին մասնակցում էին 40 երկրների շուրջ 700 գիտնականներ: Գիտաժողովի տարբեր լսարաններում ընթերցվեցին մի քանի հարյուր գեկուլյաներ՝ առաջավորասիական և եվրոպական հնագույն մշակույթների և նրանց փոխառնչությունների մասին: Խորհրդային պատվիրակության ղեկավարն էր ակադ. Բ.Ա.Ռիբակովը: Հայաստանից մասնակցում էին Հ.Ա.Մարտիրոսյանը, Բ.Գ.Նրիցյանը:

47. Հայաստանը էնեոլիթի (պղնձեքարեդարյան) ժամանակաշրջանում, ՀԺՊ, (1971), 110-125.

Армения в эпоху энеолита (медно-каменного века), (ИАН), 1971, 111-125.

Հայկական լեռնաշխարհը առաջավորասիական էնեոլիթյան (Ք.ա. VI-IV հազ.) մշակութային աշխարհի կարևոր օջախներից մեկն էր, ինչն էլ փորձում է ցույց տալ հեղինակն իր աշխատանքում, ուր քննարկվում են լեռնաշխարհի էնեոլիթյան մշակույթի տարածմանը, ժամանակագրությունը, արտաքին կապերին վերաբերող խնդիրներ: Առանձին ներկայացվում են Հայաստանի էնեոլիթյան բնակավայրերը (Շամիրամ-Ալթի, Թեղուտ, Մխլու Թափա, Քյուլ Թափա ևն), որոնց հիման վրա վերականգնվում է տարածքի տնտեսական (անասնապահություն, երկրագործություն, արհեստներ) և մշակութային կյանքը: Լեռնաշխարհի համաժամանակյա իրավիճակը վերլուծվում է առաջավորասիական հնագիտական մշակույթների (Հասուն, Հալաֆ, Ուբեյդ ևն) և հուշարձանների (Չաթալ հույուբ, Հաջիլար, Պիջլի Թեփե, Մերսին, Միսլի ևն) համատեքստում: Նյութերը ցույց են տալիս, որ տնտեսության զարգացումը հական տեղաշարժեր առաջացրեց Հասարակական կյանքում: Մայրիշխանական տոհմական համայնքն իր տեղը զիջեց Հայրիշխանականին, տեղի ունեցավ տոհմերի և ցեղերի հետագա համախմբում, ցեղային ժամանակավոր միությունների կազմավորում, ցեղերի ու ցեղախմբերի էթնիկական բյուրեղացում: Հայկական լեռնաշխարհը այն օջախներից մեկն էր, որտեղ Հայտնագործվեց մետաղագործությունը, խեցեգործությունը, անիվը, դուրգը ևն:

48. Վաղ բրոնզի դարը Հայաստանում, ՀԺՊ, (1971), 126-156 (Հեղինակակիցներ Է.Վ.Նանգադյան, Ի.Մ.Դյակոնով)։

Раннебронзовый век в Армении, ИАН, (1971), 126- 153 (соавторы Э.В.Ханзадян, И.М.Дьяконов)։

Վաղ բրոնզը (Ք.ա. III հազ.) Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան պատմության ամենանշանավոր ժամանակաշրջանն է, երբ լեռնաշխարհում տիրող Կուր-Արաքսյան մշակույթն իր ազդեցությունը տարածեց Հյուսիսային Կովկասի, Լևանտի, Կիլիկիայի, Իրանի հիմնական շրջանների վրա։ Սա տոհմացեղային հասարակութայն ծաղկման ժամանակաշրջան է, երբ տնտեսության անախադեպ զարգացման շնորհիվ տեղաբնակ ցեղերի հասարակական կյանքը վերջնականորեն թևակոխում է հայրիշխանական-նահապետական հարաբերությունների զարգացման ոլորտը։ Առանձնակի կանգ առնելով Վաղ Բրոնզի մշակութային կենտրոնների վրա՝ հեղինակը նշում է, որ Արարատյան դաշտավայրը, հանձինս իր նշանավոր հուշարձանների (Շենգավիթ, Շրեշ Բլուր, Քյուլ Թափա ևն), եղել է այդ մշակույթի հիմնական օջախը։ Այս համատեքստում քննարկվում են նաև նրա ծայրամասային շրջանների (Տաշիր-Ձորագետ, Թռեղք, Արևմտյան Հայաստան) բնակատեղիները։ Հատուկ ուշադրություն է դարձվում տնտեսութայն հիմնական ձևերի (երկրագործություն, անասնապահություն, որսորդություն, ձկնորսություն), արհեստագործութայն (խեցեղործություն, մետաղամշակություն) վրա։ Տնտեսութայն զարգացման հետևանքով արդեն Վաղ բրոնզում նկատվում են ունեցվածքային անհավասարություն ազդարարող երևույթներ։

49. Հայաստանը Միջին բրոնզի դարի ժամանակաշրջանում, ՀԺՊ, (1971), 157-174։

Армения в эпоху среднего бронзового века, ИАН, (1971), 157- 174։

Նեթա-խուռիական ցեղերի համախմբման, դասակարգային հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանը համընկնում է Հայաստանի մշակույթի միջինբրոնզեդարյան շրջափուլին (Ք.ա. II հազ. առաջին կես), որը ընդգրկում է Հայաստանի տոհմացեղային հասարակութայն վայրէջքի ժամանակաշրջանը։ Հատկապես բարձր զարգացման են հասնում Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, որոնք թևակոխում են վաղ պետական կազմավորումների փուլը։ Պահպանելով իրենց ինքնատիպությունը՝ լեռնաշխարհի տարբեր շրջանները ակտիվ փոխհարաբերությունների մեջ են մտնում առաջավորասիական երկրամասերի հետ։ Ի տարբերություն նախորդ՝ վաղբրոնզեդարյան շրջափուլի, Միջին բրոնզին բնորոշ է մշակույթների որոշակի տեղայնացում։ Հայաստանում առաջանում են մի քանի մշակութային օջախներ (Տաշիր-Ձո-

րազեւտ/Թռեղք, Արարատյան դաշտ, Սեւանի ավազան, Արեւմտյան Հայաստանի շրջաններ): Առանձին անդրադարձ է կատարվում բնակատեղիներին, ամրոցներին, դամբարանադաշտերին (Թազաքենդ, Ղոշունդաշ, Մուխաննաթ-Թափա, Ուզերլիկ, Կիրովական, Թռեղք ևն), տնտեսությանը, արհեստներին (խեցեղեն, մետաղագործություն, ոսկերչություն): Պարզվում է, որ այս շրջափուլում տնտեսության հիմնական ձև է եղել, թերևս, անասնապահությունը: Միջին բրոնզի վերելքը բնորոշվում է որպես ռազմական դեմոկրատիայի շրջան, որի էությունը ճիշտ ըմբռնման համար հիմք կարող են հանդիսանալ, բացի հնագիտական տվյալներից, նաև խեթա-խուրիական գրավոր աղբյուրները:

50. Հայաստանը Զարգացած կամ Ուշ բրոնզի ժամանակաշրջանում, ՀԺՊ, (1971), 203- 229.

*Армения в эпоху развитого или позднего бронзового века, ИАН, (1971), 203- 229.*

Ք.ա. II Հազ. երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհը թևակոխում է նախնադարյան մշակույթի և ռազմական դեմոկրատիայի զարգացման վերջին փուլը՝ դառնալով Առաջավոր Ասիայի մետաղագործության խոշոր կենտրոններից մեկը: Հեղինակը քննում է արհեստներին (զինագործությանը, աշխատանքային գործիքների արտադրությանը, ոսկերչությանը, խեցեգործությանը, երկաթագործությանը), տնտեսությանը (կիսաքոչվորական անասնապահություն, երկրագործություն ևն) հետ առնչվող հարցեր: Լըճաշենյան գտածոների հիման վրա առանձին անդրադարձ է կատարվում փոխադրամիջոցներին: Փոխանակություն և առևտրական ճանապարհների մասին խոսելիս՝ հեղինակը նշում է լեռնաշխարհի տրանզիտային նշանակությունը առաջավորասիական առևտրական հարաբերություններում: Քննարկվում են նաև սոցիալական կյանքին վերաբերող հարցեր: Ժամանակաշրջանի կարևոր առանձնահատկությունն է աստիճանական անցումը դասակարգային հասարակության, որի հետևանքով առաջանում է տնային ստրկությունը, թեև պահպանվում են տոհմացեղային հարաբերություններ՝ տոհմական ավագանիով և ընտանեկան համայնքով:

51. Պաշտամունքը, կրոնը և արվեստը նախնադարյան Հայաստանում, ՀԺՊ, (1971), 247-279.

*Культ, религия и искусство в первобытной Армении, ИАН, (1971), 246- 276.*

Ժամանակագրական լայն դաշտի վրա (Քարի դարից մինչև Բրոնզի դարի վերջը) քննվում է նախնադարյան Հայաստանի հոգևոր մշակույթը: Հեղինակը հատկապես կանգ է առնում կրոնական հավատալիքների և արվեստի ծագման խնդիրների վրա,

մանրամասն անդրադառնում է Էնոլլիթ-Ուշ բրոնզի Հայաստանի արվեստին և պաշտամունքին վերաբերող հարցերին (որսորդական հավատալիքներ, պողպաբերության, նախնիների, լուսաստունների, ջրի պաշտամունք, տիեզերական պատկերացումներ, անդրշիրիմյան կյանք ևն): Սկզբնաղբյուր են հանդիսանում ժայռապատկերները, բրոնզե գոտիները, խեցանոթների և այլ արտեֆակտների պատկերազրույթունը, արձանիկները, վիշապաքարերը ևն իրենց զուգահեռներով հինառաջավորասիական մշակութային աշխարհում: Արդեն Ուշ բրոնզում ձևավորված պատկերացումները հող են նախապատրաստում հեթանոսական կրոնի և արվեստի ձևավորման համար: Այս իմաստով հայ հոգևոր մշակույթի ակունքները կարելի է փնտրել Բրոնզի դարում:

52. Ուրարտուի սոցիալ- տնտեսական կարգը, պետական կառուցվածքը և քաղաքները, ՀԺՊ, (1971), 338- 358 (հեղինակակից Ն.Վ. Հարությունյան):

Социально- экономический строй, государственная структура и города Урарту, ИАН, (1971), 338- 358 (соавтор Н.В. Арутюнян).

Համատեղ հոդվածում Հ.Մարտիրոսյանի գրչին է պատկանում ուրարտական քաղաքներին նվիրված հատվածը, ուր նա փորձում է վերականգնել վերջիններիս բնույթը: Հեղինակը գտնում է, որ սեպագրերում քաղաք կոչվածներից միայն մի մասն է համապատասխանում այդ բառի զուտ էությունը: Ինչպես ցույց են տալիս հնագիտական տվյալները, նրանցից շատերը միայն ռազմական նպատակով կառուցված բերդ-շեներ էին: Առանձին խոսք է գնում Տուշպայի, էրեբունիի, Թեյշեբաինիի, Արգիշտիխիսիլիի մասին: Հիշատակվում են Արևմտյան Հայաստանում գտնվող Ալթին-Թեփե, Բաղնոց, Կայալը Դերե, բնակավայրերը, որոնք իրենց բնույթով նույնանում են Արևելյան Հայաստանի ուրարտական հուշարձաններին:

53. Քարի դարից Ուրարտու, Երևան, Հայաստան հրատ., 1971, 130 էջ.

От каменного века до Урарту, Ереван, Изд. Айастан, 1971, 130 с.

Գրքում ներկայացվում է Հայկական լեռնաշխարհի հնագիտական իրավիճակը Հին Քարի դարից մինչև ուրարտական թագավորության անկումը: Գիրքը բաղկացած է վեց բաժնից, որոնցում հեղինակը համապատասխանաբար անդրադառնում է լեռնաշխարհի քարեդարյան (I, II Գյուլիս), պղնձե-քարեդարյան (III), վաղ բրոնզի (IV), Միջին և Ուշ բրոնզի (V) և վաղ երկաթ-ուրարտական (VI) շրջաններին: Հ.Մարտիրոսյանի փուլաբաժանման համա-

կարգում զուտ նախնադար է ընկալվում մինչև Ք.ա. III հազ. ընկած ժամանակաշրջանը: Ք.ա. III հազ. սկսած Հայաստանը դառնում է Հին Արևելքի ժայռագավառային մեծ կենտրոն: Ք.ա. II հազ. այն ցեղային հզոր միությունների և վաղ պետական կազմավորումների երկիր է, իսկ ուրարտական շրջանում՝ լիովին ներ է առնվում Հինարևելյան դասական քաղաքակրթությունների շարքը: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում նյութական և հոգևոր մշակույթի, տնտեսության, արհեստների զարգացման օրինաչափությունների, արտաքին կապերի ուղղությունների վրա: Աշխատանքը հագեցված է մասնադիտական տերմինների բազմաթիվ բացատրություններով:

54. *Данные по социально-экономической структуре города Аргиштихинили: Тезисы докладов 5-ой всесоюзной сессии по Древнему Востоку, Тбилиси, 1971, 109-112.*

Արգիշտիխինիլի 1962-1971 թթ. պեղումներից ի հայտ եկած նյութական մշակույթի, ինչպես նաև ուրարտական գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա վերականգնվում է քաղաքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը: Տես սույն ցուցակի թիվ 58:

55. *Данные по социально-экономической структуре города Аргиштихинили: Тезисы докладов сессионных и пленарных заседаний (Всесоюзная научная сессия посвященная итогам полевых археологических и этнографических исследований в 1970г), Тбилиси 1971, 50-52.*

Տես սույն ցուցակի թիվ 54:

56. *Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники, ВОН, 9 (1971), 64-74.*

Ք.ա. III-I հազ. թվադրվող հարյուրավոր ժայռագրերում և հնագիտական բազմապիսի առարկաների (խեցեղեն, սրբարաններ, վիշապաքարեր ևն) վրա պատկերված հարյուր նշանագրերից մի քանիսի (արև, երկինք, ջուր, աղբյուր, մարդ ևն) քննարկումն ու բացահայտումը կատարված են ժայռապատկերների սյուժետային, նախնադարյան և հինարևելյան հավատալիքների, առասպելաբանության, բանահյուսության, ազգագրության, մատենագիտության տվյալների, ինչպես նաև բուն նշանագրերի գրաֆիկական վերլուծության հիման վրա: Հիշյալ գրերի ներքին իմաստաբանության բացահայտման և ուրարտա-հայկական հիերոգլիֆիկ նշանաձևերի համադրման եղանակով հեղինակին հաջողվել է պարզել ոչ միայն տարբեր ժամանակներում օգտագործվող պարզունակ գրերի փոխադարձ անքակտելի կապն ու պայմանավորվա-

ծուծյունը, այլև՝ նրանց արժեքն ու ծագման միասնական ակունքները:

57. *Sémantique des dessins rupestres des monts de Guegam (Arménie): VII Congrès international des sciences préhistoriques et protohistoriques (les rapports et les communications de la délégation des archéologues de l'URSS), Moscou 1971, 1- 17.*

Տե՛ս սուլյն ցուցակի թիվ 56, Համառոտ՝ 46:

1972

58. *К социально-экономической структуре города Ар- гиштихинили, СА, 3 (1972), 38- 55.*

Արգիշտիխինիլի տասնամյա պեղումների (1962-1971 թթ.) արդյունքների վերլուծությամբ հեղինակը քննարկվում է քաղաքի սոցիալ-տնտեսական կառուցվածքին վերաբերող որոշ խնդիրներ: Ներկայացվում են նաև հայտնաբերված 17 սեպագիր արձանագրությունները: Արգիշտիխինիլի տիպիկ հինարևելյան քաղաք էր՝ կառուցապատման բազմաթիվ զուգահեռներով Միջագետքում և Փոքր Ասիայում:

59. *Некоторые археологические данные об урартской медицине, ИФЖ, 1 (1972), 235- 252 (соавтор С.К.Межлумян).*

Հոդվածում քննարկվում են Հարցեր, կապված 1965 թ. Արգիշտիխինիլիում պեղված մի մեծ առանձնատան հետ, որը թալանվել, հրդեհվել և ավերվել էր քաղաքի կործանման պահին: Այստեղից հայտնաբերվեցին յուղերի, օժանելիք, քսուկների, դեղամիջոցների համար նախատեսված 40 անոթներ, ինչպես նաև 20 տեսակ կենդանիների (ոչնի, կրիա, գայլ, աղվես, խոճկոր, ջեյրան ևն) կմախքների մնացորդներ, որոնք հինարևելյան ժամանակներից մինչ միջնադար կիրառվում էին հիմնականում ուռուցքային, մաշկային և այլ հիվանդությունների դեմ դեղամիջոցներ պատրաստելու համար: Փաստորեն Ք.ա. VIII դ. Արգիշտիխինիլիում ապրել է բժիշկ-քուրմ, որ լայն գիտելիքներ է ունեցել բժշկության մասին:

60. Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-Հայկական կրկնակները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, 81 էջ (ամփոփումը ռուս. և ֆրանս.)

*Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники, Ереван, Изд. АН Арм ССР, 1973, 81 с. (резюме на русск. и франц.)*

Աշխատանքը նվիրված է Հայկական լեռնաշխարհում գրչության նախասկզբնական ձևերի՝ նշանագիր-գաղափարագրերի առաջացման ու զարգացման խնդրին: Ք.ա. III-I հազ. հարյուրավոր ժայռապատկերներում և հնագիտական բազմապիսի առարկաների վրա դիտված վեց տասնյակ նշանագրերի քննարկումն ու բացահայտումը կատարված են ժայռապատկերների սյուժետային, նախնադարյան և հինարևելյան հավատալիքների, առասպելաբանության, բանահյուսության և ազգագրության ընձեռած տվյալների, ինչպես նաև բուն նշանագրերի գրաֆիկական վերլուծության հիման վրա: Այն կազմված է ներածությունից և հինգ գլուխներից: Առաջին գլխում քննարկվում են տիեզերական պատկերացումների նախնադարյան համակարգին և նրան վերաբերող նշանագրերի (արև, խաչ, լուսին ևն) նշանակությանը առնչվող հարցեր: Հաջորդ գլխում վերականգնվում են նախաքնիկների պատկերացումները համաստեղությունների մասին, ներկայացվում են կենդանականարային որոշ պատկերներ և նշաններ (խոյ, ցլավիշապներ, առյուծ ևն): Երրորդ գլխում բերվում է երկրային պատկերացումների և նրանց համապատասխան նշանագրեր-գաղափարագրերի (երկիր, լեռ, ջուր, աղբյուր ևն) հետ առնչվող տեղեկատվությունը: Վերջին երկու գլուխներում խոսվում է մարդակերպ ֆակների, մարդկային ֆիգուրների և նրանց համապատասխան գաղափարագրերի (մարդ-որսորդ, առաջնորդ, խաչնարած, արևային ոգիներ), ինչպես նաև կենդանի թռչունների, այլ հասկացողությունների, իրեր ու առարկաների (կենդանի, թռչուն, սանդուղք, կառք գաղափարագրեր) մասին: Որպես եզրակացություն Հ.Մարտիրոսյանը շեշտում է, որ արդեն Ք.ա. III հազ. ձևավորվել էին գրչության ամենապարզ տեսակները՝ պատկերագիրը, նշանագիրն ու գաղափարագիրը, որոնք ընկած են ուրարտական հիերոգլիֆիկայի հիմքում և հետագայում անցել են Հայկական մեհենագրությանը:

61. Նախնադարյան Հայաստանի լուսնաարեգակնային տոմարը, ԼՀԳ, 7 (1973), 23-42.

Лунно-солнечный календарь первобытной Армении, ВОН, 7 (1973), 23-42.

Հողվածում քննարկված են Գեղամա լեռների ժայռապատկերների մի մասը, որոնք ակնհայտորեն կրում են տիեզերական պատկերներ: Վերջիններս հիմնականում վերաբերում են Ք.ա. II հազ. և գտնվում են այնպիսի վայրերում, որտեղից առավել հարմար է դիտարկել երկնային լուսատուներին: Հայաստանի նախնադարյան քրմերը որոշակի պրակտիկ պատկերացումներ են ունեցել Արևի, լուսնի, մոլորակների, աստղերի, լուսատուների շարժման և կենդանակերպի տասներկու համաստեղութունների մասին, կարողացել են ստեղծել թվաբանական որոշակի համակարգ երկնային լուսատուների շարժման մասին: Այդ ժայռագիր-տոմարները կազմված են որոշակի քանակութային միանշանակ երկնային մարմինների կամ նրանց մասնիկների պատկերներից, որոնցից յուրաքանչյուրն առանձին դեպքում համապատասխանում է շաբաթվա օրերին, լուսնային և արեգակնային ամիսների տևողությանը:

62. Приереванский клад древней бронзы, КСИА, 134 (1973), 122-127 (соавтор А.Мнацаканян).

Ջրաչեն ավանի արևելյան մասում, 1967 թ. պատահամբ հայտնարեղվել է բրոնզե իրերի դանձ՝ բաղկացած օբսիդիանե թիթեղից, տաս տափակ ուրագներից, մեկ խողովակակոթառ կացնիկից, ութ ռազմական կացիններից: Հայտնարեղված նյութերը իրենց որոշակի զուգահեռներն են գտնում առաջավորասիական և կովկասյան հուշարձաններում: Հեղինակները հատկապես կանգ են առնում ռազմական կացինների վրա, որոնք կազմում են մերձերևանյան գանձի գրեթե կեսը: Այս նյութերը ենթարկվել են սպեկտրալ անալիզի. տվյալները ցույց են տալիս, որ դրանք պատրաստված են եղել տեղական պղնձից անագի, կապարի, արծաթի, ալյումինիումի, երկաթի, նիկելի և մանգանի բնական պարունակությամբ, որին արհեստականորեն խառնվել է մկնդեղ (մինչև 5,8 տոկոս): Նյութերը թվագրվում են Ք.ա. III հազ.:

63. Древнеурартская металлургическая мастерская в городе Аргиштихинили, ИФЖ, 1, (1973), 157-168.

Հողվածը նվիրված է 1965-1971 թթ. Արմավիրի արևմտյան ամրոցի մոտ բացված մետաղագործական արհեստանոցին, որն իր բնույթով առաջինն է ուրարտական հուշարձանների շարքում: Այն զգալի գիտական հետաքրքրութուն է ներկայացնում իր խոշոր և բնորոշ համալիրներով, որոնց մեջ համադրված են մետաղա-

գործական հիմնական սարքավորումները (ձուլարան, քուրա, հարստացման համալիր), գործիքները (հայոցներ, աղորիքներ, թակեր, մուրճեր), արտադրութեան թափոնները (տարբեր մետաղների խարամներ), ստացված մետաղը (երկաթի բլիթաձև կտորներ, բրոնզի նստվածքներ), արհեստանոցում պատրաստված իրեր (նետաւըլաքներ, դանակներ ևն): Հնագիտական, քիմիական և սպեկտրալ ուսումնասիրութեանները ցույց են տալիս, որ Արգիշտիխինիլի արհեստանոցում կատարվել են մետաղամշակութեան հետ կապված բոլոր գործընթացները (հանքաքարի մանրատում, լվացում, ձուլում, կռում, կոփում, դրվադում, փորագրում ևն) և արտադրվել են զարդարանքի, զենքի, գործիքների բոլոր հիմնական տեսակները: Ըստ այդմ, ստացվել են տարբեր որակի անագա-սղնձային և սղնձա-մինդեղային բրոնզներ և երկաթի նախապատրաստուկներ:

64. Древние иероглифы Армении и их урарто-армянские двойники: В кн. Кавказ и Восточная Европа в Древности, Москва, 1973, 39- 46.

Տե՛ս սույն ցուցակի թիվ 56:

65. Գիտնականը, մարդը, քաղաքացին, ՀԱ, 4 (1973), 23- 25.  
Ученый, человек, гражданин, РА, 4 (1973), 23- 25.

Տե՛ս սույն ցուցակի թիվ 20:

1974

66. Արժեքավոր ուսումնասիրութեան (Խ.Մուշեղյանի «Հայաստանի դրամական գանձերը», Երևան, 1973 զրքի կապակցութեամբ), Գրական թերթ, 12 (1974), 4.

Ценное исследование (по поводу кн. Х. Мушегяна, "Монетные клады Армении", Ереван, 1973), Литературная газета, 12 (1974), 4.

Սույն հոդվածը Խ. Մուշեղյանի «Հայաստանի դրամական գանձերը» (հ.1, Ե. 1973) զրքի գրախոսութեանն է: Աշխատութեանը նվիրված է Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղում հայտնաբերված գանձին, որը Հայկական լեռնաշխարհում հայտնի հնագույն և հարստագույն գանձերից է՝ բաղկացած հելլենիստական ու հուրմեական 373 դրամներից:

67. Հայաստանի Հնագույն մշակույթի ուսումնասիրությունը և նրա զարգացման հեռանկարները, *ԼՀԳ*, 7 (1974), 25-39.

*Изучение древнейшей культуры Армении и перспективы ее развития*, *ВОН*, 7 (1974), 25-39.

Աշխատանքը նվիրված է հայ հնագիտության ընդհանուր ձեռքբերումների իմաստավորմանը՝ նախնադարից մինչև ուրարտական ժամանակաշրջան, ինչը հնարավորություն է տալիս մոտենալու մարդու, մարդկային հասարակության առաջացման և զարգացման, նախնադարյան գաղափարախոսության, արվեստի, մետաղագործության և այլ արհեստների հետ կապված հարցերի լուսաբանմանը: Նշվում է, որ այս հարցերը անհրաժեշտ է դիտարկել Հին Արևելքի, էգեյան աշխարհի, Կովկասի հետ առնչությունների համատեքստում: Բացահայտվում է նախա- և ետիսորհրդային հայ հնագիտության տարբերությունը, սահմանվում են արդի հայ հնագիտության խնդիրները, հիմնավորվում է նոր պեղումների իրականացման անհրաժեշտությունը: Նշվում է հայ հնագիտության տեխնիկայի ոչ բավարար զինվածությունը, լաբորատորիաների սակավությունը, որի հետևանքով դժվարանում է միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացումը:

68. *Аргистихинили*, *АПА* 8, вып. I, Ереван 1974, 176 с.

Աշխատությունը նվիրված է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նոր-Արմավիրյան արշավախմբի (ղեկավար՝ Հ. Մարտիրոսյան) ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքում 1962-1971թթ. կատարած պեղումների արդյունքներին: Այն բաղկացած է ութ գլուխներից, վերջաբանից և աղյուսակներից: Առաջին գլխում («Արգիշտիխինիլի հնագիտական ուսումնասիրության հակիրճ ակնարկ») քննարկվում են խորենացուց մինև 20-րդ դ. քաղաքի ուսումնասիրության պատմությունը առնչվող խնդիրներ: Այստեղ հեղինակը անդրադառնում է նաև քաղաքի նախաուրարտական բնակավայրերի առկայության խնդրին և ուրարտացիների կողմից Արարատյան դաշտավայրի գրավման պատմությանը: Հաջորդ գլուխը («Քաղաքի սեպագիր հատվածական պատմությունը») նվիրված է քաղաքի պատմությանը՝ ըստ ուրարտական սեպագրերի, սկսած Արգիշտի I ժամանակաշրջանից: Երրորդ գլուխը («Տեղագրությունը և քաղաքաչինական կառուցվածքը») վերաբերում է ուրարտական քաղաքի տեղագրական ընտրության առանձնահատկություններին: Փորձ է կատարվում ցույց տալ քաղաքի հինարևելյան բնույթը՝ առաջավորասիական և այդ թվում այլ ուրարտական հայտնի քաղաքների փորձի հիման վրա: Հեղինակը եզրակացնում է, որ Արգիշտիխինիլի-Արմավիրը բնակեցվել է Ք.ա. III հազ., որի վերջում լքվել է: Ք.ա. II հազ. վերջին քառորդում նրա տարածքում ի հայտ է եկել Ուշ բրոնզ-

Վաղ երկաթի բնակավայր, որը ավերվել է ուրարտացիների կողմից: Ուրարտական քաղաքի կառուցումը սկսվեց Ք.ա. VIII դ. առաջին քառորդում: Կյանքը այստեղ շարունակվեց Ուրարտուի անկումից հետո ևս, ընդհուպ մինչև մոնղոլական ժամանակաշրջանը, երբ քաղաքը վերջնականորեն լքվեց: Նոր գյուղական բնակավայրեր նրա տարածքում ի հայտ եկան միայն XIX դ.: Հինգերորդ («Արևմտյան ամրոցը», այստեղ քննվում է նաև արևելյանը) և վեցերորդ («Ներքին քաղաքի բնակելի թաղամասերը») դուխները նվիրված են քաղաքի ճարտարապետությանը, քննվում է նաև պեղումներից հայտնաբերված կենդանաբանական նյութեր: Հաջորդ դլխում («Տնտեսութունը») ներկայացվում է վերականգնված երկրագործութունը, անասնապահութունը, արհեստները: Ի վերջո ութերորդ դլխում («Քաղաքի անկման հնագիտական մանրամասները») նկարագրվում են սկյութա-մեդական ցեղերի արշավանքը Ուրարտուի տարածք մոտ Ք.ա. 590 թ., քաղաքների ավերումը և այդ մասին վկայող հնագիտական տվյալները: Աշխատանքը, նյութի փաստագրման, քարտեզագրման, գրավոր և հնագիտական աղբյուրների համատեղման տեսանկյունից, հայ հնագիտների կողմից գրված լավագույն հատորներից է: Այս աշխատանքի մոդելով է կառուցված Հ.Մարտիրոսյանի Հայկական Սովետական Հանրագիտարանում (Հ. 2, Եր., 1976, էջ 5-6) տպված «Արգիշտիխինիլի» ներամփոփ հոդվածը:

1975

69. Водохранилище Аргиштихинили и некоторые вопросы урартского гидростроительства, ВОН, 10 (1975), 51-67. (соавторы Р.М.Торосян, К.К.Кафадарян, В.Р.Исраелян, Л.А.Петросян).

Հոդվածը նվիրված է 1973 թ. հնագիտական աշխատանքների ժամանակ Արգիշտիխինիլի արևմտյան ամրոցում բացված ջրամբարին, որն արտաքուստ աշտարակատիպ, քառանկյուն, երկհարկանի աղյուսաշար շինութուն է, գրադեցնում է կառույցի առաջին հարկը: Հատակն ու պատերը կառուցված են տուֆե սալիկներից: Երկրորդ հարկը բուն ավազանից անջատված է եղել հիմնահարկի պատերի վրա թողնված հարթակով: Ուրարտական վարպետներին հաջողվել է լուծել ջրի ճնշման իներցիայի, գոլորշիացման, ֆիլտրացման, ջրամերժ երակների ստեղծման, դրենաժավորման, շլյուզավորման հետ կապված բարդ տեխնիկական հարցեր: Ավելի ուշ ժամանակաշրջանի հայկական հիդրոկառույցները, ըստ էության, շարունակել են ուրարտական ավանդույթները:

70. Արգիշտիխիսինիլին կլիներ 2750 տարեկան, ԳՏ, 4 (1975), 47-53.

*Аргиштихинили исполнилось бы 2750 лет, НТ, 4 (1975), 47- 53.*

Վերականգնվում է Արգիշտիխիսինիլի քաղաքի ընդհանուր պատկերը՝ տնտեսութունը (պահեստները, ջրամբարները), ճարտարապետութունը, նյութական մշակույթը: Օգտագործելով սեպագիր տվյալները հեղինակը փորձում է վերհանել ընդհանրապես Աղա երկրի վարչա-տնտեսական կառուցվածքը: Ք.ա. 585թ. սկյութա-սարմատական ցեղերի զորախմբերի հարվածների տակ Արգիշտիխիսինիլին կործանվում է: Որոշ ժամանակ անց այստեղ կյանքը վերականգնվում է հանձինս հայկական Արմավիրի:

1976

71. Տիեզերական կտավներ, ՀԶ, 4 օգոստոսի (1976), 3, 7.

*Космические полотна, ЗР, 4 августа (1976), 3, 7.*

Գիտահանրամատչելի ձևով ներկայացվում են Գեղամա լեռների ժայռապատկերների ուսումնասիրության արդյունքները: Ցույց է տրվում ժայռադրերից նշանադրերին անցման ընթացքը, խոսվում է մի քանի նշանակալի ժայռադրերի մասին, վերականգնվում՝ հների առասպելական և սաղմնային գիտական մտածելակերպը, տոմարը ևն:

72. Պահպանենք հայրենի հուշարձանները, ՀԱ, 10 (1976), 13-15.

*Сохраним отечественные памятники, РА, 10 (1976), 13-15.*

Հոգվածը վերաբերում է պատմա-հնագիտական հուշարձանների պահպանության, բարեկարգման, վերականգնման և օգտագործման խնդիրներին: Գրվել է համապատասխան նոր օրենքի հրապարակման կապակցությամբ: Հ.Մարտիրոսյանը անդրադառնում է նոր հողերի իրացմանը և դրա հետ կապված հուշարձանների ավերմանը, գանձախույզներին, ժողովրդի վերաբերմունքին: Կարևորում են հուշարձանների պահպանության, կոնսերվացման, վերականգման հետ առնչվող աշխատանքները և նրանց քարոզչությունը: Այս ամենի համար, ըստ նրա, հարկավոր է լուրջ պետական միջնորդութուն: Հայաստանը կարող է դառնալ տուրիստական կարևոր կենտրոն: Հնությունների նկատմամբ հոգատար վերաբերմունքը շեշտվում է՝ ազգային ինքնությունը պահպանելու տեսանկյունից:

73. Նախնադարյան առասպելի հետքերով, ՀԱ, 1 (1977), 23- 26.

По следам первобытного мифа, РА, 1 (1977), 23- 26.

Ժայռապատկերների մեկնարանման միջոցով փորձ է կատարվում վերականգնել նախնադարյան մարդու առասպելամտածողությունը: Քննարկվում են «տիեզերական աղետի», «արևթռչնի և օձավիշապի կովի», «վիշապամարտի» առասպելները: Բերվում է համեմատական նյութ հայ և առաջավորասիական ժողովուրդների առասպելներից, հատկապես՝ Հայկական էպոսից: Հեղինակը հատուկ քննարկման է ենթարկում պարսկահայքյան Հասանը հուշարձանից հայտնաբերված ոսկե դավաթի դրվագները՝ փորձելով գուգահեռներ գտնել նրա վրա պահպանված պատկերազրույթյան և հայ առասպելաբանության միջև:

74. Ученый- патриот, К 90- летию со дня рождения И.А.Орбели, Коммунист, 20 марта (1977), 2.

Հոգվածը նվիրված է ակադ. Հ.Օրբելու ծննդյան 90-ամյակին, ուր ականավոր գիտնականը ներկայացվում է որպես XX դ. խոշոր գեմքերից մեկը հասարակագիտության, հատկապես արևելատիտության բնագավառում: Տե՛ս սույն ցուցակի թիվ 20:

1978

75. Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, Սովետական Գրող, 1978, 208 էջ.

Наука начинается в первобытности, Ереван, Советакан Грох, 1978, 208 с.

Գիտահանրամատչելի ձևով ներկայացվում է նախնադարյան սաղմնային գիտական պատկերացումների ծննդի և զարգացման ընթացքը՝ Ք.ա. VI-I հազ. Հայաստանի հայտնի հնագիտական նյութի հիման վրա: Աշխատանքը բաղկացած է տաս գլուխներից, որոնցում հեղինակը ներկայացնում է արվեստն ու բնապաշտությունը նախնադարյան Հայաստանում, նախնադարյան մի քանի առասպելներ, անցումը ժայռապատկերներից դեպի ժայռագրություն-նշանագրություն և դրա հետ կապված մի շարք պարզ նշանագրեր-գաղափարագրեր, աստղային երկնքի մասին պատկերացումները և վերականգնվող լուսնա-արեգակնային տոմարը: Նյութի ներկայացումը գուգահեռվում է լեռնաշխարհի և հարակից շրջանների հնագիտական իրավիճակի, նյութական և հոգևոր մշակույթի, տնտեսության վերականգնությամբ, ինչի համար հիմնական աղբյուր են հանդիսանում հեղինակի կողմից ուսումնասիր-

ված ժայռապատկերները, որոնց իմաստաբանությունը պարզելու համար օգտագործվում են այլ հնագիտական նյութեր, ուրարտական հիերոգլիֆներ, հայկական մեհենագրեր, հինարևելյան և հայկական առասպելաբանության տվյալներ: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ նախնադարյան Հայաստանում մարդը բավականին լայն գիտելիքներ է ունեցել շրջապատող աշխարհի մասին և լիովին ինտեգրացվել է հինարևելյան քաղաքակրթության կրողների շարքում:

1979

76. Рецензия на кн. Древний Восток 2, Ереван 1976, ИФЖ, 1 (1979), 257-260.

Գրախոսությունը նվիրված է ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի «Հին Արևելք» պարբերականի համապատասխան համարի 15 հոդվածների մեկնաբանմանը: Գրախոսն անդրադառնում է Գ.Կոմորոցիի, Ա.Վայմանի, Վ.Խաչատրյանի, Ն.Մկրտչյանի, Գ.Ֆրայդանքի, Ս.Կաշկայի, Ն.Հարությունյանի, Մ.Իսրայելյանի, Դ.Սարգսյանի, Գ.Տիրացյանի, Ի.Դյակոնովի, Վ.Ներոզնակի, Գ.Սարգսյանի, Ի.Ալիևի, Գ.Ասլանովի, Լ.Տեր-Պետրոսյանի և Մ.Խաչիկյանի՝ հինարևելյան պատմությանը և հնագիտությանը նվիրված աշխատանքներին: Բարձր գնահատելով ժողովածուն գրախոսը գտնում է, որ լավ կլիներ եթե հատորն ունենար նկարների աղյուսակներ և համապատասխան ցանկեր:

1981

77. Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀՀ, № 11, պրակ III, Երևան 1981, 124 էջ (ամփոփումը ռուս. և անգլ.):

Наскальные изображения Гегамских гор, АПА, № 11, вып. III, Ереван 1981, 124 с. (резюме на русск. и англ.).

Գեղամա լեռների ժայռապատկերներին նվիրված ներկա հատորը, առաջինի (տես սույն ցուցակի թիվ 45) շարունակությունն է և ընդգրկում է 1969-1971 թթ. Փոքր և Մեծ Պայտասար, Զիարաթ, Շեյխի Չինգիլ և այլ գագաթների ստորոտներում հայտնաբերված և ուսումնասիրված հարուստ պատկերախմբերի նյութերը, որոնք վերաբերում են Ք.ա. V-I հազ.: Աշխատանքը կազմելուն մասնակցել են Ս.Կ.Մեծումյանը (IV Գլուխ) և Հ. Իսրայելյանը (VII Գլխի որոշ հատվածներ): Այն կազմված է յոթ գլուխներից, որոնցում, համապատասխանաբար, հեղինակը անդրադառնում է ժայռանկարների կատարման տեխնիկային և ոճային առանձնահատկություններին, ժամանակագրության խնդրին, որսորդական տեսարանների սյուժետային բովանդակությանը, ժայռանկարներին՝ որպես պատ-

մարնագիտական ուսումնասիրության հավաստի աղբյուրի, լուսատուների երկրաչափական և կենդանական պատկերներին և լուսնային տոմարին, կրոնազաղափարական պատկերացումներին, նախնադարյան առասպելներին և ամփոփման ձևով ժայռագրերից պատկերազրին անցման գործընթացին: Ժայռագրերի միջոցով վերականգնվում է հնագույն Հայաստանի տնտեսության, արհեստների, նյութական և հոգևոր մշակույթի ընդհանուր պատկերը:

**78. Печати мастеров на сосудах из Аргиштихинили: В кн. Древний Восток и Мировая Культура, Москва, Изд. Наука, 1981, 80- 84.**

Հոգվածում քննարկված են Արգիշտիխինիլի արևմտյան ամրոցի 1973-1975թթ. պեղումների ժամանակ ի հայտ եկած խեցեղենի բազմաթիվ բեկորների նշանները: Մասնավորապես դիտարկված են կնիքի երկու դաջվածք, օձին կտցահարող թռչնի պատկերով, որի դիտարկում պատկերված է կիսալուսին: Բերելով զուգահեռներ Հայաստանի, Առաջավոր Ասիայի և Էգեյան աշխարհի հնագիտական հուշարձաններից, ինչպես նաև առասպելաբանությունից հեղինակը դալիս է այն եզրակացություն, որ դաջվածքի վրա պատկերված է տիեզերական աղետի մասին առասպելի մի հատվածը, որը տարածված է եղել Հին Արևելքում, իսկ Հայկական լեռնաշխարհում ունեցել է իր ուրույն զարգացումը սկսած Ք.ա. III հազ. մոտ լինելով խոռոչական պատկերացումներին:

1986

**79. Արգիշտիխինիլի սարկոֆագը, ՊԲՀ, 3 (1986), 221-227 (հեղինակակից Ռ.Մ.Թորոսյան).**

**Саркофаг из Аргиштихинили, ИФЖ, 3 (1986), 221-227 (соавтор Р.М.Торосян).**

Հոգվածը նվիրված է 1973 թ., Արգիշտիխինիլի 350-400 մ հյուսիս, պատահաբար բացված քարե սարկոֆագի քննությունը: Սարկոֆագում գտվեցին մարդու մասնատված ոսկորներ և զարդարանքի առարկաներ պարունակող չորս շքեղ սափորներ և չորս թասեր, որոնց միջից ի հայտ եկան ոսկերչական իրեր, ինչպես նաև ստեատիտից պատրաստված դլանաձև դաջ-կնիք: Ուրարտական թասերից մեկը իր վրա պարունակում էր մի հիերոգլիֆ նշան: Հեղինակների կարծիքով, այստեղ գործ ունենք դիամասնատման (կամ «երկրորդային») թաղման սովորույթի հետ, ըստ որի դին դրվում էր բաց երկնքի տակ՝ մինչև մասթափվելը կամ թռչունների կողմից հռչատվելը, ապա մնացորդները մասնատվելով, թաղվում էին:

### Summary

The third volume of periodical annotative-bibliographic publication on renowned scientists of Armenia is dedicated to one of the most prominent Armenian archaeologists of the 20<sup>th</sup> century - Harutyun A. Martirosyan. He was born on the 1<sup>st</sup> of Mai 1921, in Kumayri (Leninakan) in the family of poet. In 1938-1941 and 1946-1948 he studied at the Yerevan State University, Faculty of History. During the World War I (1941-1945) ceasing his studies H.Martirosyan was volunteered the Soviet Army as an officer. After graduating from the university he continued his postgraduate in St. Petersburg (Leningrad) under the auspices of the B.B.Piotrovski. The years 1959-1977 were the golden age of the scientific life of H.Martirosyan, when, having been the head of department of "Early Archaeology" at the Institute of Archaeology & Ethnography, Armenian Academy of Sciences, he could wholly demonstrate his professional and organizer's talent, as well as personal qualities. The archaeologist died untimely on the 28<sup>th</sup> of July 1977 leaving a great trace in Armenian reality.

With his fecund activities he participated successfully in the scientific life of Armenia reconstructing the most ancient past of Armenian Highland. In this process he conducted numerous excavations and surveys in different parts of the Republic of Armenia (Ararat valley, Sevan Lake basin, Gugark, Shirak etc.) and published ca. 80 works (10 of which, by the way, are monographs) towards different archaeological topics on economy, culture etc. of the Highland and surrounding regions of the Caucasus and the Near East. The geographical, chronological and thematic interests of the archaeologist were as diverse as his way of writing. So from the stylistic point view of one can divide his published works into mere scientific (90 %) and popular (10 %). Though the author focused on himself on the problems of ancient cultures of Armenian Highland (in particular the eastern regions of it) but he conducted his investigations on the basis of common Near Eastern archaeology.

In chronological sense he touched on the problems of the 4<sup>th</sup>-1<sup>st</sup> millennia B.C., in particular cases, for the best understanding of the essence of investigated periods, coming out from above mentioned chronological limits. Thematically one can differentiate between

three branches of interests. First, at the beginning of his creative activity, he investigated Iron Age local and Urartian cultures, considering them on the outcome of his own excavations in Golovino (1950), Teiṣebaini (Karmir Blur, 1947-1958) and Argiṣtiḫinili (Ar-mavir, 1962-1977). The problems dealing with it made the first stage of scientific activity of H.Martirosyan, to which was dedicated his promotion work ("The culture of the Southern Transcaucasus in the 7<sup>th</sup>-6<sup>th</sup> centuries B.C.") defended in 1951 (came out in Russian, Yerevan 1954, with the name "Excavations in Golovino"). The greatest achievement here was that H.Martirosyan investigated the Urartian reality from the prism of local cultures and could define their border. The second important field of his interests was the problem of chronology and periodization of Bronze and Iron Age cultures of the Highland to be reflected in his habilitation work defended in 1965 with the name "Armenia in Bronze and Iron Ages" (published in Russian, Yerevan 1964), which with its significance thus far remains unsurpassed in Armenian archaeology. He managed to create a system of cultural sequences to be now a basis of early archaeology in Armenia. The last punch of interests of the author were rock carvings, pictographic scripts i.e. the problems of spiritual culture of ancient Armenia on the whole (from Neolithic through Iron Age), which were considered on the ground of his surveys in Geghama mountains (1966-1971).

One of the most important peculiarities of H.Martirosyan's activity was that he could present in popular form his achievements obtained in the scientific front: two monographs and more than ten articles witness it. Due to the essential work done by H.Martirosyan the early archaeology in Armenia continued its development. New archaeological undertakings realized after archaeologist's death have come to confirm many of his ideas, so his works have not lost their significance till now.

АЛФАВИТНЫЙ СПИСОК СОАВТОРОВ

Դյալոնով Ի. 48  
Թորոսյան Ռ. 31, 79  
Խանգադյան Է. 48  
Հարուժյունյան Ն. 52  
Իրաշիլյան Հ. 45  
Մնացականյան Հ. 11

Аракелян Б. 34  
Израелян В. 69  
Кафагарян К. 69  
Межлумян С. 59  
Мнацаканян А. 62  
Мунчаев Р. 37  
Петросян Л. 69  
Торосян Р. 69  
Хачатрян Т. 17

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՆԵՐ

СОКРАЩЕНИЯ

ԲԵՀ	Բանբեր Երևանի Համալսարանի
ԳՏ	Գիտություն և Տեխնիկա
ԵԵ	Երեկոյան Երևան
ՀԱ	Հայաստանի Աշխատավորուհի
ՀԱճ	Հանդէս Ամսօրեայ
ՀԺՊ	Հայ Ժողովրդի Պատմություն
ՀՀՀ	Հայաստանի Հնագիտական Հուշարձանները
ՀՀՆՆ	Հայաստանում Հնագիտական Հետազոտությունների արդյունքներին նվիրված նստաշրջանների զեկուցումների թեզեր
ՀԶ	Հայրենիքի Չայն
ԼՀԳ	Լրագրեր Հասարակական Գիտությունների
ՊԲՀ	Պատմա-Բանասիրական Հանդես
ՍՀ	Սովետական Հայաստան
ՏՀԳ	Տեղեկագիր Հասարակական Գիտությունների
ՁՕ	Археологические Открытия

<b>АПА</b>	Археологические Памятники Ар- мении
<b>АРА</b>	Археологические Раскопки в Ар- мении
<b>ВДИ</b>	Вестник Древней Истории
<b>ВЕ</b>	Вечерний Ереван
<b>ЕЖ</b>	Ежемесячный Журнал Армян- ских Мхитаристов Вены (Ангес Амсореа)
<b>ВЕУ</b>	Вестник Ереванского Универси- тета
<b>ЗР</b>	Зов Родины
<b>ИАН</b>	История Армянского Народа
<b>ИОН</b>	Известия Общественных Наук
<b>ИФЖ</b>	Историко-Филологический Журнал
<b>КСИА</b>	Краткие Сообщения Институ- та Археологии
<b>КСИИМК</b>	Краткие Сообщения Институ- та Истории Материальной Культуры
<b>НТ</b>	Наука и техника
<b>РА</b>	Работница Армении

<b>СА</b>	<i>Советская Археология</i>
<b>САрм.</b>	<i>Советская Армения</i>
<b>СПАА</b>	<i>Научные сессии посвященные результатам археологических работ в Армении</i>
<b>AMI</b>	<i>Archäologische Mitteilungen aus Iran</i>
<b>BAR</b>	<i>British Archaeological Reports</i>
<b>SMEA</b>	<i>Studi Micenei ed Egeo- Anatolici</i>
<b>SAOC</b>	<i>Studies in Ancient Oriental Civilizations</i>

АЛФАВИТНЫЙ СПИСОК ТРУДОВ

- Ախթալայի Հնագիտական դանձը, 1958  
Արգիշտիխինիլին կլիներ 2750 տարեկան, 1975  
Արգիշտիխինիլի սարկոֆագը, 1986  
Արժեքավոր ուսումնասիրություն (Խ.Մուշեղյանի «Հայաստանի դրամական գանձերը», Ե. 1973 զրքի կապակցությամբ), 1974  
Գեղամա լեռների ժայռապատկերները, 1971, 1981  
Գիտնականը, մարդը, քաղաքացին, Յ.Օրբելու ծննդեան 75-ամեակի առթիւ, 1962  
Գիտնականը, մարդը, քաղաքացին, 1973  
Գիտությունը սկսվում է նախնադարում, 1978  
Գրախոսություն. Н.В. Арутюнян, Новые урармские надписи Кармир Блура, Е. 1966, 1967  
Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ, 1970  
Հագարամյակների վարագույրը ետ է գնում, 1967  
Հայաստանը Զարգացած կամ Ուշ բրոնզի ժամանակաշրջանում, 1971  
Հայաստանը Էնեոլիթի (պղնձեքարեդարյան) ժամանակաշրջանում, 1971  
Հայաստանի էնեոլիթյան մշակույթի մեկնաբանման հարցի շուրջը, 1967  
Հայաստանի Հնագույն մշակույթի ուսումնասիրությունը և նրա զարգացման հեռանկարները, 1974  
Հայաստանը Միջին բրոնզի դարի ժամանակաշրջանում, 1971  
Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, 1969  
Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, 1973  
Հնագետի օրագրից, 1957, 1962  
Հնագիտական մեծ նորույթ, 1965  
Հովսեփի Օրբելի, 1961  
Նախապատմական և պրոտոպատմական գիտությունների VIII միջազգային կոնգրեսը, 1971  
Նախնադարյան առասպելի հետքերով, 1977

Նախնադարյան Հայաստանի լուսնաարեգակնային տոմարը, 1973

Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, 1958

Նոր է արդյոք լուսաբանումը, 1968

Պահպանենք Հայրենի հուշարձանները, 1976

Պաշտամունքը, կրոնը և արվեստը նախնադարյան Հայաստանում, 1971

Պատմության քառուղիներով, 1965

Պիոտրովսկի Բ.Բ., 1958

Վաղ բրոնզի դարը Հայաստանում, 1971

Տիեզերական կտավներ, 1976

Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, 1969

Ուրարտուի սոցիալ-տնտեսական կարգը, պետական կառուցվածքը և քաղաքները, 1971

Քարի դարից Ուրարտու, 1971

Аргиштихинили, 1974

Аргиштихинили раскрывает тайну, 1964

Армения в эпоху бронзы и раннего железа, 1964

Археологическое изучение Армении за годы советской власти, 1967

Археологические открытия в Армении, 1968

Водохранилище Аргиштихинили и некоторые вопросы урартского гидростроительства, 1975

Выдающийся археолог и арменист. К 60- летию члена-корреспондента Академии наук Армянской ССР Б.Пиотровского, 1968

Город Тейшебаини по раскопкам 1947-1958 гг., 1961

Данные по социально-экономической структуре города Аргиштихинили. 1971

Древнеурартская металлургическая мастерская в городе Аргиштихинили, 1973

Древние иероглифы Армении и их урарто-армянские двойники, 1973

Идолы из раскопок Кармир-Блура, 1958

Из глубин тысячелетий, 1968

Исследования пещер в ущелье реки Разган и  
наскальные изображения в Гегамских горах и  
Шамираме, 1970

К вопросу о культуре Армении в VII- VI вв. до  
н.э., 1953

Комплекс изделий из могильника Такиа (Агве-  
сагзор), 1959

К предыстории древнейших этапов культуры  
Армении, 1960

К социально- экономической структуре города  
Аргиштихинили, 1972

Культура Южного Закавказья в VII- VI вв. до н.  
э. по археологическим данным, 1951

К характеристике города Тейшебаини, 1957

Научная конференция Института истории ма-  
териальной культуры АН СССР и Институ-  
та истории АН Арм. ССР, посвященная ар-  
хеологии Кавказа, 1957

Некоторые археологические данные об урартс-  
кой медицине, 1972

Новые данные по истории города Тейшебаини,  
1963

О гревнем поселении и могильнике близ Лени-  
накана, 1954

О гревнем поселении около Ленинакана, 1952

О периодизации археологических памятников  
Армении эпохи бронзы и раннего железа,  
1964

Первобытные иероглифы Армении и их урар-  
то- армянские двойники, 1971

Печати мастеров на сосудах из Аргиштихини-  
ли, 1981

Приереванский клад гревней бронзы, 1973

Раскопки Аргиштихинили, 1965

Раскопки Аргиштихинили, 1967

Раскопки в Головино. Результаты работ 1929 и  
1950 гг., 1954

Раскопки жилых кварталов города Тейшебаани  
в 1955- 1956 гг., **1958**

Раскопки в Кировакане и некоторые памятники  
раннеурартского периода (IX- VIII вв. до  
н. э.), **1956**

Рецензия на кн. Древний Восток 2, Е. 1976, **1979**

Рецензия на кн. Б.Б. Пиотровский, Кармир Блур  
III, **1956**

Рецензия на кн. С.Г.Сардарян, Первобытное об-  
щество в Армении, Е. 1967, **1968**

Ученый- патриот, К 90- летию со дня рожде-  
ния И.А.Орбели, **1977**

*Sémantique des dessins rupestres des monts de Guegam*  
(Arménie), **1971**

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիտական գործունեութեան համառոտ ակնարկ .....	7
Հարուժյուն Մարտիրոսյանի կյանքի և գործունեութեան հիմնական տարեթվերը .....	23
Գրականություն Հ.Ա.Մարտիրոսյանի կյանքի և գործունեութեան մասին .....	37
Աշխատությունների ժամանակագրական ցանկ՝ ծանոթագրություններով .....	41
Համահեղինակների այբբենական ցանկ .....	77
Համառոտագրություններ .....	78
Աշխատությունների այբբենական ցանկ .....	81
Summary .....	75

## СОДЕРЖАНИЕ

Краткий очерк научной деятельности .....	25
Основные вехи жизни и деятельности Арутюна Мартиросяна .....	35
Литература о жизни и деятельности А.А. Мартиросяна .....	37
Хронологический список трудов с аннотациями .....	41
Алфавитный список соавторов .....	77
Сокращения .....	78
Алфавитный список трудов .....	81
Summary .....	75

**ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ**

**3**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ**

**3**

**АРУТЮН АРТАШЕСОВИЧ МАРТИРОСЯН**

**БИОБИБЛИОГРАФИЯ**

*Համակարգչային տեքստը հավաքված է*

*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում*

*Компьютерный текст набран в*

*Институте Археологии и этнографии НАН РА*

*էջադրումը՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության*

*ինստիտուտի համակարգչային բաժնի*

*Ստորագրված է տպագրության 10.10.2001: Չափսը՝ 60x84:*

*Տառատեսակ՝ "Gree Nor, Baltica cirilic": 5.4 տպ. մամ.:*

*Պատվեր՝ 061 :*

*Գինը՝ պայմանագրային :*

*ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչության տպարան,*

*Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24*





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0065578

A II  
87186